№ 146 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ, 8 ՅՈՒԼԻՍԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Բայտարարութիւնների համար վճարում են [illegible] 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՅՈՒԼԻՍԻ 1-Ի 8 ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Բայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ցաւութիւն Թումանեանը, Եղիսաբէթ, Մարգարիտ և Ադելայիդա Թումանեանները սրտի անհուն կսկիծով յայտնում են բարեկամներին ու ծանօթներին, առաջինները իրանց վաղաժամ որդու, վերջինները՝ իրանց թանգագին եղբօր

ՄՕՍԿՎԱՅԻ ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ԶԻՆԻՎՈՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՒԱԳ ԻՐԱՎՈՒՆՔԵՐ

ԼԵՒՈՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում ծանր հիւանդութիւնից յետոյ։ Պատարագի սկիզբը՝ չորեքշաբթի, յունիսի 8-ին, առաւօտեան ժամը 10-ին Զրկինանց եկեղեցում (Грибоѣдовская ул.). Թաղումը՝ նոյն օրը պատարագից յետոյ Վէրայի հայոց գերեզմանատանը։ 455. 1—1

ԴԻՄՈՒՄՆ

Հայ ուսուցիչներին, ուսանողներին եւ միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտներին

Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական եւ Տնայնագործական Ընկերութեան վարչութիւնը կազմակերպում է կամաւոր հնձուորների խմբեր առաջիկայ օգոստոս ամսին Ալէքսանդրոպոլի, Ախալքալաքի, Նոր-Բայազէտի և Լոռու շրջանների հայ գիւղացիներին դաշտային աշխատանքների—հունձի և կալի ժամանակ օգնելու նպատակով։ Ուստի սրանով Ընկերութեան վարչութիւնը դիմում է և խնդրում այն հայ ուսուցիչներին, ուսանողներին, միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտներին և առհասարակ բոլոր ցանկացողներին, որոնք կը կամենան օգնել իրանց ձրի աշխատանքով հայ գիւղացուն և առանձնապէս պատերազմ կանչված պահեստի զինուորների ու կամաւորների ընտանիքներին ներկայ հանգամանքներում, երբ բանւորավարձի չափազանց թանգութեան և ընդհանրապէս աշխատաւոր ձեռքերի սակաւութեան պատճառով հունձը կարող է ուշանալ, կարող է մնալ անձրևների ու ձիան տակ և դրանով զրկել գիւղացուն ապրուստի միակ միջոցից,—շտապել ցուցակագրվել, իբրև կամաւոր հնձուոր, և ապա ըստ ցանկութեան ուղևորվել վերոյիշեալ շրջաններից մէկն ու մէկը։

Կամաւոր հնձուորները կը ստանան Ընկերութեան վարչութիւնից անհրաժեշտ գործիքներ—գերանդի կամ մանգաղ և լեսան, իսկ Թիֆլիսից ուղևորվողները նաև երկաթուղու տոմսակ մինչև Սանահին, Ղարաքիլիսա, Ալէքսանդրոպոլ կամ Բակուրիա կայարանները։

Կամաւոր հնձուոր կարելի է գրվել՝

1) Թիֆլիսում, Հայոց Գիւղատնտ. և Տնայն. Ընկերութեան գրասենեակում (Ներսիսեան դպրոցի հին շինութիւն)։

2) Նոր-Բայազէտում՝ յուլիսի 12-ից Ընկերութեան տեղական ճիւղի վարչութեան նախագահ պ. Ստեփան Բաղիկեանի մօտ։

3) Ալէքսանդրոպոլում՝ Ընկերութեան ներկայացուցիչ պ. Գալուստ Վեհապետեանի մօտ։

4) Ախալքալաքում՝ Ընկերութեան ներկայացուցիչ պ. Վարդան Շահպարոնեանի և Ախալքալաքի շրջանի զէմստվային հրանգիչ պ. Խաչատուր Դիլանեանի մօտ։

5) Լոռու շրջանում՝ Ուզունլար գիւղում, պ. Սարգիս Զուրաբեանի մօտ և Ջաղաջ-Օղլի գիւղում՝ Արիստակէս քահանայ Արզվեանի և հայոց դպրոցի աւագ-ուսուցիչ պ. Սարգիս Խանդեանի մօտ։

Ցուցակագրութիւնը կը շարունակվի մինչև այս յուլիս ամսի վերջը։

(7,8,12,19) առ. 448. 5—2 Վարչութիւն

Ալէքսանդրոպոլի Իշխան Արղութեան-Երկայնաբազուկի անուան օրիորդաց միջնակարգ դպրոցի համար հարկաւոր է

ՏԵՍՈՒՉ

բարձրագոյն կրթութիւնով և փորձված։ Ցանկացողները՝ պայմանների մասին բարեհաճեն դիմել հոգաբարձութեան։

(առ.) 453. 4—1

ԲԺԻՇԿ

Տ. ՄԱԿԱՐԵԱՆՑԸ,

ծանոթագէտ՝ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների, վերակսեց հիւանդների ընդունելութիւնը ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ, Верхній бульваръ, д. Зиналовой.

առ. (օ. մ.) 405. 12—12

Թիֆլիսի արհեստ. ակումբ

(Միքայէլեան փ. № 66)

Այսօր, չորեքշաբթի, յուլիսի 8-ին

Երկրորդ անգամ Թիֆլիսի բեմի վրա հայկական ուրախ օպերետ՝ արևելեան եղանակներով՝ ամեն տեղ մեծ աջողութիւն գտած

ՆԱ ՉԸ ԼԻՆԻ—ՍԱ ԼԻՆԻ

3 գործ. պարսկերէնից թարգմանութիւն Ս. Կարապետեանի

Երաժշտախաւսմբ—թառ —ճիանուրների՝ ղեկավարութեամբ թարգմանիչ Ս. Կարապետեանի։

3-րդ արարուածում պարսկական հարսանիք պար ու զուռ.

Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8½-ին։ Տեղերի գները 50 կ. մինչև 10 կ.։

Կազմակերպիչ՝ Գ. Փիրումեան

առ. 454. 1—1

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 յուլիսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Յուլիսի 4-ին ծովասերմ շրջանում թնդանօթաձգութիւն էր։ Մեր շոգենաւերից մինը ջրասուզեց Թիւրքական բեռնակիր մի նաւ։

Օլթիի ուղղութեամբ Թիւրք հետախոյզ զինուորները հանդիպեցին մեր պահակախմբին, որ կրակով ցիրուցան արաւ նրանց և շատերին սրի քաշեց։

Արդօսի շրջանում թիւրք հետախոյզները փորձեցին յարձակվել մեր պահակախմբերի վրա՝ գործածելով ձեռքի ռումբեր, բայց ամենուրեք վանվեցին և կրեցին կորուստներ։

Սիվրի-չայի ուղղութեամբ լոյս յուլիսի 4-ի գիշերը թիւրքերը մեր պահակ-զինուորների յարձակման փորձերից բացին անկարգ հրացանաձգութիւն, կրակելով մեծ թուով փամփուշտ, որոնք սակայն մեզ ոչ մի վնաս չը տուին։

Մուշի ուղղութեամբ կռիւները զալպանում են։

Մեր զօրամասերից մինը գրաւեց Լիզը, և շարունակում է հետապնդել թիւրքերին։

Մնացած ռազմաճակատում փոփոխութիւն չը կայ։

ՌՈՒՍԱՑ ՆԱԻԱՏՈՐՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 յուլիսի

ՍԷՎԱՍՏՈՊՕԼ.—Սև ծովի նաւերը ռմբակոծեցին քարածխային շրջանը և Զունգուլդակ նաւահանգիստը, ուր հրդեհեցին մի մեծ շոգենաւ, նաև կործանեցին ծովափնեայ շէնքերը։ Ռուսաց ականանաւերը, հանդիպելով ծովի վրա երեք թիւրքական առագաստանաւի՝ քարածուխ բեռնած՝ և իջեցնելով նաւաստիներին, ոչնչացրին նրանց։ Նաւաստիները բերված են Սէվաստոպօլ։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՔԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 յուլիս

ԱԹԷՆՔ.—Շարունակ ստացվում են տեղեկութիւններ Թիւրքիայից յոյների հալածանքների մասին։

Միտիլէն կղզուց հաղորդում են, որ Այվալըքի բնակիչները, որ բացառապէս յոյներ են, հրաման են ստացել հեռանալ քաղաքից և գաղթել Փոքր-Ասիայի խորքը։ Բնակիչները այդ հրամանին հաղիւ թէ ենթարկվեն առանց դիմադրութեան։ Այդ տեղեկութիւններն այստեղ յուզմունք են առաջ բերում։

Ի նկատի ունենալով որ քրիստոնեաների հալածանքը Թիւրքիայում սարսափելի չափեր է ընդունում, յունաց կառավարութիւնը վճռել է դիմել Թիւրքիային բողոքով, պահանջելով դադարեցնել քրիստոնեաներին Փոքր-Ասիա աքսորելը, մանաւանդ Մարմարայի ծովափից, Այվալըքից և Զմիւռնիայի ծովափից։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՎԵՀԵՐ ԴՐԱՑԻՆ

Օքսֆորդագէտում յայտնի էր Ստեփանափաը իր բարութիւնով, մարդասիրութիւնով և հայրենասիրութեամբ։ Ով որ Օքսֆորդագէտ գնացած է, անշուշտ նա Ստեփանափաին տեսած և ընտանիքի հետ՝ նրա սեղանին բազմած, հիւրասիրված և պատիւներ տեսած է։ Ոչ միայն օտարականները, այլ ընկերներն էլ նրանից շատ օգնութիւն վայելած էին։ Զուսեցողին փողով, անասունով, բերքով միշտ օգնած է, ձեռք է բռնած, գործի է դրած և հացի տէր է դարձրած։

Երբ Արդանուշից չէթաներն եկան, Ստեփան-ափաը ալիւր աղաց, օչխար հաւաքեց և առատութեամբ նրանց կերակրեց, որպէսզի ժողովրդին՝ աղքատին չը տանջեն։ Նրա տունն էր իջևանած Զաբիթ-բէգը, որ չէթաների հրամանատարն էր, իր քարտուղար՝ Ազիզ-էֆէնդիի և յիսունից աւելի թիկնապահների և սպասաւորների հետ։ Ամեն օր նրա տունն էին Շաւշէթի, Կուճէնի, Վէլի և Դարարվէլի մօլլաները, բէգերը, զաղիները ու իմամները, նոյնիսկ Շաւշէթի մուդիր Փուադ-բէգն իրանց սպասաւորներով, օգնականներով, որոնք անխնայ ուտում, խմում և զուարճանում էին Ստեփանափաի հաշուով։

Ո՛չ միայն չէթաների առաջին խումբը, այլ Արդուինից, Մուլղուրից և Խոթից եկած երկրորդ, երրորդ և չորրորդ խմբերը, Կ. Պոլսից եկած առաջին օրդուն (բանակի) ասկէրներն էլ իրանց օֆիցէրներով և զօրականներով անխնայ կերան ու լափեցին Ստեփան-ափաի փլաւն ու քեաբաբը (խոյված), տապակած հաւերն ու հնդուկները, երշիկն ու ապուխտը, խաղողն ու խնձորը, չամիչն ու կակալը, թթուն ու տանը, մի խօսքով այն ամեն բարին, որ նա սովորաբար հաղարաւոր անգամով ուղարկում էր Բաթում և ոսկի էր տեղափոխում Շաւշէթ։

Ի՞նչ անէր. անխիղճ ու անօրէն գաղանները սրերը սրած և փամփուշտները հրացանների փողերի մէջ դրած սպառնում էին կրակին տալ Օքսֆորդագէտը, թալանել խանութները, կրպակները, տները, յափշտակել հարս աղջիկները և սրի տալ բոլոր հայ այրերին 10—90 տարեկան։ Բաւական չէր, որ այդ վիճակը տակալով տարել էին 500 տարի, այժմ էլ, 37 տարվայ անդորր և խաղաղ կեանքից յետոյ, Թիւրքերը նորից իրանց բորենիներին մացրել էին Շաւշէթ, որ 37 տարվայ ընթացքում ռուսների խաղաղ հովանաւորութեան ժամանակ ետ քցած վերջին պլիկները, արծաթն ու ոսկին, մարգարիտն ու զոհարը, անդուն ու թաւիշը, բեհեզն ու դիպակը յափշտակեն, հայերին վերածեն դարձեալ բօշայութեան և մուրացկանութեան։

Եւ Թիւրքերը իրանց նպատակին հասան։

Ինչ որ իթթիհադականները ծրագրել էին Կ. Պոլսում, ինչ դաս որ սօֆիաները կարդացել էին Ֆաթիհ սուլթան Մէհմէդի և սուլթան Սիւլէյմանի մզկիթների գաւիթներում, այդ բոլորը ճշդութեամբ կատարեցին չէթաներն ու նայիբ-իմամները (խալիֆի փոխանորդները)։ Շաւշէթում։ Օքսֆորդագէտցիները այնպէս էին սարսափած, այնպէս էին ահաբեկված, որ իրանց կեանքը, անմեղ աղջիկները, դեռահաս պատանիներն ու երիտասարդները, քնքոյշ մանուկները փրկելու համար պարտաւորված էին իրանց ամբողջ գոյքը, հարստութիւնը թափել գազանների ոտքերի տակ, մարդ չը զոհելու համար։

Լինվէր-փաշայի աշակերտները, սօֆիա նէշամի մօնթերը իրականացրին իրանց տրված ծրագիրը։

Սաթլէլի բնակիչները ուզեցին դիմադրել, աշխատեցին չը կողոպտվել, բայց գաղանները այնպիսի տեսարան կազմեցին, որ Սաթլէլ մանելուց 8 օր չը լցած՝ ամբողջ Սաթլէլի հայ այրերի արիւնով ներկեցին աւանը, յափշտակեցին կիներին, աղջիկներին և մանուկներին, կողոպտեցին, թալանեցին ամբողջ գոյքը, պղծեցին եկեղեցին, սրբապան անօթները, պատառեցին պատկերները, հրի ճարակ արին «Փոքրիկ-Պարիզի» գեղեցիկ վիլլաները և ամբողջ շուկան։

Սաթլէլի ժողովրդի օղերի ու կոծերի աղաղակները, մանուկների ճիչի ձայները, հրդեհի ճարճատումները ծակեցին, խլացրին օքսֆորդագէտցիների ականջները, քրքրեցին սրտերը և ստիպեցին իրանց դահիճներին ստրկանալու։

Ո՛չ միայն ստրկացան, այլ նոյնիսկ պարտաւորվեցին իրանց պատերի կրօնին ու եկեղեցուն դաւաճանելու, առերես ուրանալու և իսլամի հետևորդների մատեաններում արձանագրվելու, որպէսզի կեանքները փրկենք։

Թէև փրկեցին, բայց սոսկալի զոհաբերութիւններով...

Զընկան սրից, բայց ընկան հոգով, գլորվեցին սրտով։

Եւ երբ Մուրիէի «Իմամ-Նայիբ» մօլլա Բուշթին՝ Զաբիթ-բէգի հետ միախորհուրդ սկսեց տանջել Ստեփան-ափաին, որ տա կամ սուրն ընտրէ և կամ Ղուրանը, թշուառ հայը, տասնեակ հազար ձրիակեր թիւրքերին կերակրողը ընկճվեց, մոլորվեց, բայց չը գլորվեց։ Երբ դահիճները նրա կրծքին սուրը դրած ուզում էին հայհոյել տալ խաչն ու Տիրամօր պատկերը, Ստեփան-ափաը վերջին ճիգը թափեց և 24 ժամ ժամանակ խնդրեց, որ կարողանայ խորհել և վճռել։

Զաբիթ-բէգն ու Փուադ-բէգը 1000-ական ռուբլի տացան և մօլլա Բուշթիի կամքի հակառակ 24 ժամ ժամանակը տուին։ Իսկ Ստեփան-ափաը փոխանակ խորհելու և ծրագիր կազմելու՝ էֆէնդիներին թողեց Օքսֆորդագէտը և միայնակ գնաց Դարարվէլ, առանց երկար մտածելու գիշերային խաւարին բաղնեց իր բարեկամ Փէհրուզ աղայի դուռը և ներս մտաւ։

Փէհրուզ-աղան այլայլվեց, երբ տեսաւ իր յարկի տակ յուսահատ և ապաստանի կարօտ բարեկամին։ Բայց նա էլ սոսկում էր. տանը կրօնամոլ պառաւներ կային, ջահել երիտասարդներ, երեխաներ, մանաւանդ իր երկու կիները, որոնք զինված էին Փէհրուզի դէմ, քանի որ նա աքսում էր առաւելութիւն չը տալ ոչ նախկին հաւակաւոր կնոջը, ոչ էլ դեռահաս երկրորդ կնոջը։

Փէհրուզ-աղան սկսեց հոգով խռովել, մաքով տանջվել, բայց այնպիսի զիրք բռնեց, որ քաջալերէ բարեկամին, և ասաց.

— Տեփան-աղա, անհոգ եղիր. մինչև ես չը մեռնեմ, մինչև հոգիս այս մարմնից չը բաժանվի, քեզ ոչ ոքից վնաս չի կարող հասնել։ Միայն դիակս կոխարելով կարող են այս դռնից ներս մտնել ու քեզ կալանաւորել։

— Դու դիտես. արա՝ ինչ որ մեր բարեկամութեան կը վայելէ։

— Հանգիստ եղիր. սա օրախ է, սա աղաւարդու օրախ է. նախ պիտի համարձակ-

(Հրագիրներից)

◆ Դարդանէլում Թիւրքերի պաշտպանական գործողութիւնները ղեկավարում են Մերգէն-փաշան և Իզզէթ-փաշան։ Իսկ գերմանացի ծովակալ Սուշոնը ղեկավարում է Սև-ծովում կատարվող ռազմի գործողութիւնները ռուսների դէմ։

◆ Կ. Պոլսից Բերլին է կանչվել Սանդէրսը։

◆ Սուլթանը իրաւէ է հրատարակում արգելքը անձնական աւտոմոբիլ ունենալ Արաբիայում։

◆ «Գիբէնը» գտնվում է Սմէնիայում։

◆ Կ. Պոլսում տեղի են ունենում անկարգութիւններ։ Բանկերը գումարները փոխադրում են։ Ղալաթիան այրվում է։

◆ Թիւրքերի արկածախնդրութիւնը Պարսկաստանում կարելի է վերջացած համարել։

◆ Սանդէրսը և Վագէնհէյմը Բերլինում յայտնել են, որ եթէ Բուլգարիան շարունակէ յամառել և թոյլ չը տալ անց կացնել ռազմամթերք Թիւրքիայի համար, այն ժամանակ Դարդանէլի անկումը անխուսափելի է շատ մօտիկ ապագայում։

ՎԱՆԸ ԱԶԱՏԱԳՐՎԵԼՈՒՑ ՑԵՏՈՑ

Թիւրք եւ քիւրդ փախստականներ

◆ Նորդուզի մէջ լեռները ապաստանող քիւրդերը յաճախ գիւղերը կիջնան և սպանութիւններ կը գործեն։

Հայոց ձորի Կատեպանցի քարերուն մէջ բաւական թուով թիւրքեր ապաստանած են, ինչպէս իմացուած է նոյն տեղերէն բռնուած թիւրք գերիէ մը։

Մաշտակի շրջանի մէջն ալ գիւղացիներ հանդիպած են, գիշեր ատեն, լրտեսելու եկող թիւրքերու։

◆ Փախստական քիւրդերը հետզհետէ իրենց տեղերը կը վերադառնան և օգտուելով պատեհութիւններէ, կը ձեռնարկեն իրենց սովորական ոճրագործութիւններուն։ Այսպէս վերջերս Մակուրցի քիւրդերը (Սարայի շրջանակի մէջ) վերադարձած են իրենց գիւղերը։ Նէյլիը աղայի մարդիկ, Թըլորակ գիւղի մօտ, իրենց հանդիպած մի քանի ազարացի և մանտանցի հայ գիւղացիներ կառնեն, հետերնին կը տանին, և մինչև հիմա ալ չեն վերադարձած ատոնք։ Նմանապէս Փուխ գիւղի մօտ բազմաթիւ զինուած քիւրդեր երևցած են, որ կը տարածուին հետզհետէ դէպի իրենց գիւղերը։

(«Վան-Տօսպ»)

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԵՄ. ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

(Հայրապետական դիւանի կողմից)

Վեհափառ Հայրապետի դիւանը իր յունիսի 16-ի № 1041 գրութեան մէջ ասում է.

«Վանի առաջնորդական փոխանորդը մայիսի 28-ի թ. 76 գրութեամբ յայտնում է Նորին Սրբութեանը հետևեալը.

«Նահանգիս մէջ գտնուած վարդապետաց և քահանայից առաւել քան կէս սպանուած, իսկ եկեղեցական գոյք, անօթ, զգեստ, գրեանք և այլն կողոպտուած, փչացած և այրուած են... այսօր, Վեհափառ Հայրապետս, քաղաքիս քանի մը եկեղեցիներէն զատ, քաղաքիս մնացեալ, նոյնպէս և նահանգիս բոլոր եկեղեցաց և վանօրէից մէջ լրած են եկեղեցական ալեալք և ժամերգութիւնք, մինչև անգամ հոգևոր անհրաժեշտ մխիթարութիւնէն զուրկ կը գտնուի հայ ժողովուրդը, մանաւանդ ի գիւղօրայս...»։

«Ժողովրդի կրօնական մխիթարութեան համար անհրաժեշտ է շուտով ուղարկել զգեստներ, եկեղեցական սպասներ, անհրաժեշտ իրեղէններ (սկիհ, փուրվան, խաչ)։ Նորին Ս. Օծութեան հրամանով՝ դիւանս խնդրում է ձեզ՝ շուտով կարգադրել, որ ձեր թեմի եկեղեցիներից աւելորդ զգեստներ և եկեղեցական անօթներ ու իրեր շուտով ուղարկվին ս. Էջմիածին, որպէսզի հնարաւոր լինի կանոնաւոր ցուցակագրութեամբ հասցնել առայժմ միայն Վասպուրականի եկեղեցիներին՝ միանգամայն ապահով ճանապարհով։

«Առաջադրելով ձեզ ի կատար ածելու այդ յանձնարարութիւնը, յայտնում եմ միաժամանակ, որ բարեպաշտ անձինք կարող են այդ նպատակով ուղարկել մեզ նաև դրամական նուիրաբերութիւն՝ հասցնելու ըստ պատկանելոյն»։

Նուէրներ՝ թէ իրերով և թէ դրամով՝ ընդունվում են նաև Թիֆլիսի առաջնորդարանում, հասցնելու ըստ պատկանելոյն։

տաւորվեցին իրանց պապերի կրօնին ու եկեղեցուն դաւաճանելու, առերես ուրանալու և իսլամի հետևորդների մատեաններում արձանագրվելու, որպէսզի կեանքները փրկենք։

Թէև փրկեցին, բայց սոսկալի զոհաբերութիւններով...

Զընկան սրից, բայց ընկան հոգով, գլորվեցին սրտով։

Եւ երբ Մուրիէի «Իմամ-Նայիբ» մօլլա Բուշթին՝ Զաբիթ-բէգի հետ միախորհուրդ սկսեց տանջել Ստեփան-ափաին, որ տա կամ սուրն ընտրէ և կամ Ղուրանը, թշուառ հայը, տասնեակ հազար ձրիակեր թիւրքերին կերակրողը ընկճվեց, մոլորվեց, բայց չը գլորվեց։ Երբ դահիճները նրա կրծքին սուրը դրած ուզում էին հայհոյել տալ խաչն ու Տիրամօր պատկերը, Ստեփան-ափաը վերջին ճիգը թափեց և 24 ժամ ժամանակ խնդրեց, որ կարողանայ խորհել և վճռել։

Զաբիթ-բէգն ու Փուադ-բէգը 1000-ական ռուբլի տացան և մօլլա Բուշթիի կամքի հակառակ 24 ժամ ժամանակը տուին։ Իսկ Ստեփան-ափաը փոխանակ խորհելու և ծրագիր կազմելու՝ էֆէնդիներին թողեց Օքսֆորդագէտը և միայնակ գնաց Դարարվէլ, առանց երկար մտածելու գիշերային խաւարին բաղնեց իր բարեկամ Փէհրուզ աղայի դուռը և ներս մտաւ։

Փէհրուզ-աղան այլայլվեց, երբ տեսաւ իր յարկի տակ յուսահատ և ապաստանի կարօտ բարեկամին։ Բայց նա էլ սոսկում էր. տանը կրօնամոլ պառաւներ կային, ջահել երիտասարդներ, երեխաներ, մանաւանդ իր երկու կիները, որոնք զինված էին Փէհրուզի դէմ, քանի որ նա աքսում էր առաւելութիւն չը տալ ոչ նախկին հաւակաւոր կնոջը, ոչ էլ դեռահաս երկրորդ կնոջը։

Փէհրուզ-աղան սկսեց հոգով խռովել, մաքով տանջվել, բայց այնպիսի զիրք բռնեց, որ քաջալերէ բարեկամին, և ասաց.

— Տեփան-աղա, անհոգ եղիր. մինչև ես չը մեռնեմ, մինչև հոգիս այս մարմնից չը բաժանվի, քեզ ոչ ոքից վնաս չի կարող հասնել։ Միայն դիակս կոխարելով կարող են այս դռնից ներս մտնել ու քեզ կալանաւորել։

— Դու դիտես. արա՝ ինչ որ մեր բարեկամութեան կը վայելէ։

— Հանգիստ եղիր. սա օրախ է, սա աղաւարդու օրախ է. նախ պիտի համարձակ-

ՀԱՅԱՍԶԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՑ ՄԷԿԸ

—

Կարակուրա, 23 յունիսի

Այսօր Կարակուրտի ամբողջ զինուորականութեան համար, իսկ գլխաւորապէս հայ փոքրիկ գաղութի համար մեծ տօն էր։

Ամբողջ զինուորականութիւնը, գլուխ ունենալով կօրպուսի հրամանատար Կ.-ին և գեներալ Բ.-ին՝ իրանց շքախմբերով, նուագախմբերով և զօրաշարքերով՝ ընդունեցին հայկական 6-րդ դրուժինան, որ դառնում էր պատերազմի դաշտից յաղթական ճիշդ երեկոյեան ժամը 6-ին Կարակուրտ մտան հայ քաջերը՝ գլուխ ունենալով օրվայ հերոսին՝ յանձին նոյն դրուժինայի փոխ-հրամանատար Հայկ Բժշկեանի, որը վիրաւորված էր 3 անգամ և փաթաթված վիրակապերի մէջ՝ ղեկավարում էր իր վաշտը։ Դրուժինան կանգնեց յատուկ իր համար որոշված շարքում, իսկ օրվայ հերոսին հրաւիրեցին կօրպուսի հրամանատարի մօտ։

Ընդունելութիւնը շատ փառաւոր էր և սրտառուչ։ Գեներալը գրկաբաց ընդունելով հերոսին և քանիցս համբուրելով՝ թեւացուկ ներկայացրեց նրան իր մեծին յայտնելով հետեւեալը.

«Ձերդ գերազանցութիւն, թոյլ տուէք ներկայացնելու մի քաջի, որը 3 անգամ կռիւներում վիրաւորվելով՝ մնացել է շարքերի մէջ և, անցած իր վաշտի գլուխը, վանել է 2000-ից աւելի թշնամուն՝ մղելով անհաւասար կռիւ ծանրագոյն պայմաններում, գրաւել է 4 գիւղ՝ վանելով թշնամուն մօտ 35 վերստ առանց դադարի և հանգըստութեան, և որը կառավարել է ծանր պայմանների տակ իր զօրախումբը՝ երբ նոյն զօրախմբի հրամանատար Գ. Աւշարեանը քաջաբար ընկել էր թշնամու մահաբեր գնդակներից»։

Կօրպուսի հրամանատարը, իր հերթին, լսելով հերոսի քաջագործութիւնները, գբրկեց և համբուրեց նրան քանիցս, հարցնելով կռիւները և իր ստացած վէրքերի մասին, և ապա հրաւիրեց զօրահանդէսի, որտեղ հազարաւոր ուռաների և մարշերի նուագների տակ պարգևատրեց նրան ս. Գէորգի խաչով և մէդալով։ Բոլոր տեսարանները նկարվեցին։

Մէդալներով վարձատրվեցին նմանապէս հայկական 6-րդ դրուժինայի վիրաւորները հիւանդանոցում, որտեղ այցելեց նրանց թէ կօրպուսի հրամանատարը և թէ գեն. Բ.-ն։

Ն. Գ.

Բ. Գ.—Հայկ Բժշկեանը երկու անգամ ևս ներկայացված է իր քաջութեան համար շքանշանի, որը կը ստացվի որոշ ժամանակից յետոյ։ Բժշկեանը թողնում է դատարկված մարդու տպաւորութիւն, խօսում ու դատում է կրթված զինուորականի պէս, թէև զինուորական չէ եղել բնաւ։ Նոյն

ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

6 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Բրիգա-Շավէլ շրջանում թշնամու զօրամասերը հասան Տուկում-Դօբլէն զօրաճակատին և յուլիսի 5-ին առաջանում էին հարաւային ուղղութեամբ դէպի Խօֆցումբերգէ և Բենէն։ Օկմեանի գիւղից դէպի հիւսիս կօզակները աջող արշաւանք գործեցին դէպի թշնամին և յուլիսի 4-ի երեկոյեան ձեռք ձգեցին բաւականին սայլեր։ Պոպէլեանի շրջանում մենք շարունակեցինք ետ մղել թշնամուն։

Շավէլի մօտի մեր դիրքերի դէմ գերմանացիների յարձակումը յուլ. 5-ի գիշերը մենք աջողութեամբ վանեցինք։

Նէմանից յայնկոյս միևնոյն գիշերը մենք վանեցինք թշնամուն յուլիսի 2-ի գրաւած դիրքերից։

Նարէվի զօրաճակատում թշնամին առաջանում էր։ Պիսայի աջ ափում յուլիսի 5-ի գիշերը նա գրաւեց Պօրէդա գիւղը, իսկ Շկվայի ձախ ափում նրա յարձակումները մենք աջողութեամբ վանեցինք։

Օմուլէվից դէպի արևմուտք մեր զօրքերն աստիճանաբար կենտրոնանում են։ Նարէվի վրայի կամրջամերձ դիրքերում։ Այստեղ Մակով քաղաքի և Կարնէվօ գիւղի մօտ տեղի ունեցաւ յուլիսի 4-ի երեկոյեան յամառ կռիւ առաջապահ զօրախմբերի միջև, որի ժամանակ մեր գնդերից մին աջող հակայարձակում գործեց։

Լիւբլինի ուղղութեամբ թշնամու յարձակումները Վիլկօլազ - Բլբսավա ռազմաճակատի վրա յուլիսի 5-ի ընթացքում մենք վանեցինք աջողութեամբ։ Թշնամին յուլիսի 5-ի արևածագին ձեռք ձգեց Կրասնօստավը և նրա վերևի գետանցքները։ Յուլիսի 5-ին թշնամին յարձակումներ էր գործում ՌիբՁէվիցէի մօտի գետակի և Պեասկի գիւղի միջև, ինչպէս նաև Վէպրժի մօտ, բայց ապարդիւն։

Վէպրժի աջ ափում մենք վանեցինք Վօլիցէ գետի մօտ թշնամու մի քանի չափազանց յամառ յարձակումները։ Սակայն, Վօլիցէի գետաբերանի մօտ և ԳաէՁԼիկի գիւղից ոչ հեռու թշնամուն աջողվեց ամրանալ այդ գետակի աջ ափում, որից յետոյ համապատասխան նկատվեց ետ քաշել զօրքերը դէպի երկրորդ շարքի դիրքերը։

Գրաբօվէց գիւղի շրջանում յուլիսի 5-ին մենք վանեցինք թշնամու 4 կատաղի յարձակումները, որոնց ժամանակ թնդանօթային ուժեղ ռմբակոծութիւն էր տեղի ունենում։

Գուչվայի և Բուգի միջև յուլ. 4-ի երեկոյեան կատաղի կռւում մենք քըշեցինք թշնամուն սկզբում նրա գրաւած բոլոր մեր խրամատներից։

Բուգի վրա եռանդուն կռիւ է Սկօմօրօխի-Սօկալ ռազմաճակատում յուլիսի 5-ին զետն անցած թշնամու զօրամասերի դէմ։

Դնէստրի վրա կռիւները շարունակվում են նախկին զօրաճակատում։

Մնացած ուղղութեամբ խոշոր ռազմական ընդհարումներ չը կան։

ԳՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

5 յուլիսի

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն.

«Արտաւայում տեղի է ունենում բաւական ուժեղ թնդանօթաձգութիւն Սուշէի դէմ։ 12 մեծ ռումբ ընկան Արրասում։ Մասի աջ ափում հետիոտն զօրախմբերի եռանդուն գործողութիւններ են։ Առաւօտեան հակայարձակումով մենք խլեցինք այն խրամատների մի մասը, որ գրաւել էր թշնամին երէկ Սօիվօ ձորի մօտ։ Օրվայ ընթացքում գերմանացիների յարձակումը վանվեց։ Այդ կռիւների ժամանակ մենք թշնամուն պատճառեցինք շատ ծանր կորուստներ, գերեցինք 2 օֆիցէր և աւելի քան 200 զինուոր»։

ԼՕՆԴՕՆ.—Մարշալ Ֆրէնչը տեղեկացնում է.«Դրութիւնն անփոփոխ է։ Յունիսի 26-ից թէև խոշոր ընդհարումներ չեղան, բայց և այնպէս երկուստեք պայթեցնում էին ականներ և զօրաճակատի առանձին մասերը ենթարկվում էին կատաղի ռմբակոծութեան։ Երեք ճակատամարտում թշնամուն աջողվում էր գրաւել մեր խրամատները, որոնց միջից մենք իսկոյն քշում էինք նրան։ Թշնամին իր յարձակումների ժամանակ գործ էր ածում խեղդող գազեր պարունակող ռումբեր»։

ԳԵՆԵՐԱԼ ՇՏԱԲԻ ԳԼԽԱՒՈՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Մեր հակառակորդները չանք չեն խնայում տարածելու մեր մասին ամենատարբեր բնոյթի աննպաստ լուրեր։

Այսպէս, շվեդական լրագրերում Բուլենի թղթակիցների տեղեկութիւններից քաղելով, հաղորդվեց, թէ Բուկովինայում և Դնէստրի վրա ռուսները, անագին կորուստների պատճառով, ստրկված եղան աւստրիացիներից զինադադար խնդրել, սպանվածներին և վիրաւորներին հաւաքելու համար, որպէսի զինադադարը տրվեց 4 ժամով։ Այդ զինադադարի ընթացքում աւստրիացիք իբր թէ հնարաւորութիւն ունէին համոզվելու, թէ որքան մեծ են ռուսների կրած կորուստները, որից նրանք ետ քաշվեցին մի քանի կիլոմետր։

Ցիշեալ տեղեկութիւնը լիովին ստոյգ է։ Դնէստրի վրա և Բուկովինայում մենք բանակցութեան մէջ չենք մտել զինադադար կայացնելու մասին և հարկ էլ չը կար այդ անելու։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՔԸ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

6 յուլիսի

ԳԱԼԻՄՍԱԴ.—Գալանդա կառավարական շրջանի սօցիալիստական խմբակն նախաձեռնութեամբ յուլիսի 5-ին կայացաւ բողոքի ժողով յօգուտ պատերազմի ագիտացիա մղողների դէմ։ Պատգամաւոր Տօբսոնի ճառից յետոյ ընդունվեց մի բանաձև, որով ժողովը եռանդով բողոքում է այն քանի դէմ, որ օրոշ հոսանք ձգտում է նետել Շվէցիային պատերազմի գիրկը, և յայտ է յայտնում, որ կառավարութիւնը այսուհետև ևս կը պաշտպանի խիստ չէզոքութիւն։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Ուպսալի համալսարանի ուսանողական միութեան նախագահ պրիվատդոցենտ Վեսսէլը ուղարկեց Բերլինի ուսանողութեանը առանձին շնորհակալութիւն իբր թէ շվեդ ուսանողութեան անունից՝ Բերլինում ի պատիւ շվեդ թագուհու հրավառութեամբ շքերթ կազմակերպելու համար։ Ընդամենը Վեսսէլը համակրանք յայտնեց գերման ժողովրդին ներկայ համաշխարհային պատերազմի առիթով։

Այսօր շվեդական լրագրերում տպված է բողոք Ստօկհօլմի համալսարանի բոլոր ուսանողական միութիւնների անունից Վեսսէլի հանդէս գալու առիթով։ Բողոքի մէջ ասված է, թէ Վեսսէլը գործել է ինքնակամ և յանձնարարութիւն չունէր խօսելու շվեդ ուսանողների անունից։ Ստօկհօլմի ուսանողութիւնը սկզբունքով ձեռնպահ է մնում օրէկ պաշտօնական համակրանք արտայայտելուց այս կամ այն կուսող մեծ պետութեան հասցէին։

ՍՕՖԻԱ.—Իշխան Հոհենլոէն, թագաւորին ներկայանալուց յետոյ, ընդունվեց թագուհուց։ Այսօր առաւօտ իշխանն այցելեց Բաղդասարովին և երեկոյեան մեկնում է Կ. Պոլիս։

ԱԹԷՆԲ.—Օպպոզիցիոն մամուլը, խօսելով Վենիզէլոսի երեկվայ յայտարարութեան մասին, ողջունում է միինիստրների խորհրդի նախկին նախագահի նորէն քաղաքական գործունէութեան վերադառնալու վճիռը և նախադուշակում է Յունաստանին փայլուն ապագայ, շնորհիւ Վենիզէլոսի վայելած համակրութեան և նշանակութեան թէ յոյն ժողովրդի, նոյնպէս և երբեակ համաձայնութեան պետութիւնների մէջ։ Նոյնիսկ կառավարական լրագիրները կարծում են, որ Վենիզէլոսի եռանդուն մասնակցութիւնը պետական գործերում հանդիսանում է կարևոր ֆակտոր։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՔԸ

—

◆ Գերմանիայում նորից զէնքի են կանչվելու 400,000 մարդ երկաթուղային և էլեքտրաքարշի ծառայողներից։ Կանչվողներին փոխարինելու են կանայք։

◆ Լօնդօնից հեռագրում են, որ բրիտանական ընկերութիւնների կենտրոնական կոմիտէը կազմակերպում է պատերազմի յայտարարութեան տարեդարձի օրը միտինգներ ամբողջ Անգլիայում։

◆ Պարիզի լրագիրներին տեղեկացնում են Վաշինգտոնից, որ գերմանական ծովակալութիւնը անթել հեռագրով հրամայել է սուզանաւերի հրամանատարներին չը յարձակվել առանց նախազգուշացնելու։

◆ «Б. В.»-ին հաղորդում են, որ ներկայումս Անգլիայում կառուցանվում են խոշոր բիւլաններ։

◆ Արտելեան ռազմաբեմում սկսվում են ասահճանաբար լուրջ ընդհարումներ, որոնք փոխվելու են մի հակայական վճռական ճակատամարտի, որպիսին տեսած չէ աշխարհը իր գոյութեան սկզբից։ Պատրաստվում են երկուստեք թէ հետիոտն զօրաշարները և թէ հեծելազօրերը։ Թնդանօթների և գնդակաֆիրների հաշիւը անկարելի է անել։

◆ Լօնդօնից հեռագրում են. «Վաշինգտոնում Էդիսոնը և Օրվիլ-Ռայտը ձեռնարկել են եռանդուն աշխատանքների՝ միջոցներ օրօնելու համար սուզանաւերի դէմ։

◆ Իշխան Հոհենլոէն յանձնեց Ֆէրդինանդ արքային Վիլհէլմ կայսրի նամակը, որով կայզէրը իր մաերիմ բարեկամից խնդրում է թոյլ տալ Թիւրքիա անցնել 1017 վագոն։

◆ Հաւատում մահացել է «Սպարտակի» հեղինակ Զիօվանիօնի։

◆ Գեներալ Հինդենբուրգը մեկնում է արևմտեան ռազմաբեմը։

◆ Գերմանական մամուլի մի մասը նորից յարուցել է Ռուսասատանի հետ անջատ հաշտութիւն կնքելու հարցը։

◆ Բուդապէշում խլերան մեծ թուով զոհեր է տալիս։

◆ «РѢЧЬ»-ը նկատում է, որ Վիսլայի և Արևմտեան Բուգի միջև ճակատամարտը ստացել է լարված բնոյթ։ Այստեղ հակառակորդը կենտրոնացրել է 14 զօրաբանակ, Նարէվի զօրաճակատում՝ 7 զօրաբանակ, Բուգի և Դնէստրի միջև՝ մօտ 8 և Բրիգա-Շավէլ զօրաճակատում՝ 7։ Հակառակորդը իր գլխաւոր հարուածը ուղղելու է Բլբսավայի և Վէպրժի միջև։ Վարշավայի շրջանը մնում է առայժմ անտիրական գործողութիւնների շրջանից դուրս։

◆ Ժիրարդով քաղաքի վրա գերմանացիք վերջին եօթ ամսում նետել են 247 ռումբ։

◆ «Н. В.»-ն յայտնում է, որ Գերմանիայում ամեն օր մահանում են մօտ 200 ռուս գերի փորհարինք հիւանդութիւնից։

վեն այս օշախը կործանել, հիմքն արեգակը բարձրացնել և ապա քո մի մազին դիպչել։

— Ես կէս-դիշերին խփեցի բարեկամիս դուռը, հոգով վստահ՝ թէ նա չի դաւաճանի իր բարեկամին։

Երբ դրսի դուռը զարկին, Փէհրուզ-աղան իր մանկահաս կնոջը դուրս հանեց ննջարանից, որը գնաց հարևան սենեակը առանձնակի քնելու, իսկ ինքը՝ տանուտէրը քնեց Ստեփան-ափարի հետ իր ննջարանում։

— Քնիր,—ասաց Փէհրուզ-աղան,—այնքան հանդիստ, ինչքան որ անկասկած քնել ես կնոջդ՝ Աքաւնի ննջարանում 50 տարուց ի վեր։

— Ես անդորը հոգով մտայ անկողին,—ասաց Ստեփան-ափարը,—և անձնատուր եմ լինելու նիրհին։

Ճշմարիտ է, որ երկու բարեկամներն էլ պառկեցին, բայց երկուսի էլ քունը փախաւ։ Թէև ճրագները հանդցրին, բայց ննջարանի մթութիւնը չօգնեց, քնաբերը չեկաւ նրանց ուղեղին և աչքերին։ Պառկած էին, լռած էին, ծանր-ծանր շունչ էին առնում, բայց երկուսն էլ մտածում էին, երկուսն էլ կորցրած էին հոգեկան խաղաղութիւնն ու պարբերաբար սրտերը քաշում, հառաչում էին։

Փէհրուզը մտածում էր. վէճի էր բռնվել իր խղճի հետ, չը գիտէր՝ ազատ հային թէ՞ թողնէ նրան անողորմ բաղդի ճիրաններին։ Կրօնի աւանդող մոլլաները, նայիբ-իմամները կարող էին Փէհրուզին՝ հային հովանաւորելուն համար՝ անկրօն հրատարակել և քարկոծել տալ։ Կարող էին իր դրացիները մատնել, թէ նա դաւաճանում է իսլամի օրէնքին։ Թէ կիները կարող էին արձակված համարվել, քանի որ ինքը օրինաւանց էր դանվել և գործում էր շարիաթի հակառակ։ Թէ դրացիները նրան որպէս դաւաճանի կարող էին հալածել և դուրս գցել բոլոր շրջաններից։ Թէ իր խիղճը նրան կարող էր տանջել մինչև գերեզման, եթէ իր բարեկամին չօգնէր ու չը փրկէր այդ նեղ օրերին։ Թէ նա զրկված կը լինէր հոգեկան ամենամեծ հրճուանքից, եթէ իր բարեկամին չազատէր Զաբիթի և Բուլեթիի ճիրաններից։

Ամբողջ ժամեր նա մտածում, դատում, կռիւ էր մղում իրան աւանդված կրօնական հասկացողութիւնների, մարդկութեան և ընկերակցութեան զգացումների, խղճի դէմ, քննում էր, կշռադատում էր և չէր կարողանում որոշ եզրակացութեան հանել։ Եւ միշտ զգացումները, իր ասը, իր առողջ դատողութիւնները գերակշռում էին և իրան ստիպում, թէ ինքը պարտաւոր է պաշտպանել բարեկամին՝ ինչ գնով էլ որ լինի։ Փէհրուզը հայհոյում էր մաքում այն բոլոր կարգերն ու քարոզութիւնները, որոնք լիովին ներհակ էին պատուի, խղճի և հոգու զգացումներին և թելադրում էին դաժան դահիճ լինել դէպի այն բարեկամը, որը համազգնաքով չի գլորվում իսլամի վարդապետութեան ծրագրած ուղիով։

Այս պարագային նրա մաքի առաջ կանգնում էին իր զոյգ կիները, որոնք կրօնամոլ էին և օժված ամենաստոր բամբասանքներ կատարելու։ Որպէսզի իրանից վրէժխնդիր լինեն, նրանք ընդունակ էին ամեն տեսակ դաւաճանութեան և մատնութեան։ Ի՞նչպէս պահէր իր տանը նա հային՝ Ստեփան-ափարին, որին արդէն փոքր կինը տեսել էր և գուցէ դուրը բաղխելիս գիշերը շատերն էին լսել։ Ո՞ւր պահէր այդ հայ բարեկամին, որ չը նկատէին նրա արիւնկզակ և թալանող դրացիները, որոնք Ստեփանին կողոպտելու համար միջոցների մէջ խտրութիւն չէին դնի։

Ամբողջ ժամեր այս դաժան մաքերը այնքան յոգնեցրին Փէհրուզի միտքը, որ նա շշմեց ու քնեց։

Մինչև այնտեղ վիճակի մէջ էր Ստեփան-ափարը։ Նա մտածում էր, թէ նայիբ-իմամների քարոզութիւններին ներհակ՝ կարող էր արդեօք Փէհրուզը իրան պահպանել, թագցնել։ Եթէ գիշերը նրան հետամտել էին, առաւօտ նրա թագուստի տեղը մատնելու էին Զաբիթ-բէգին, որը դահիճներին ուղարկելու էր իր բարեկամի օջախն անպատուելու։ Ի՞նչ պիտի անէր ինքը այդ պարագային։ Մթթէ աւելի լաւ չէր իր տանը սպանվել, մեռնել, քան թէ ուրիշին տանջանքների մատնել, բարեկամի վիճակը վատացնել։

Այս մաքերի շուրջը շատ ծփաց Ստեփան-ափարը, նրա հոգեկան խաղաղութիւնը յուզվեց, մրրկեց, փոթորկեց և այնքան սկսեց բարձրանալ ու իջնել, որ նա յուսաբեկ՝ չը կարողացաւ նիրհի գիրկն ընկնել։ Արշալոյսին ուժասպառ, ծիւրված և յոգնած դէմքով ու աչքերով դիմաւորեց իր բարեկամին, որը ասաց.

— Տեփան-աղա, այստեղն անապահով է, վեր կաց գնանք, քանի դեռ քեզ չեն տեսել մեր դրացիները։

Բարեկամները իրար ետևից դուրս եկան տնից, և Փէհրուզը հային տարաւ իր խոտանոցում պահեց, վերադարձաւ տուն։

Երբ տան դռնից ներս էր մտնում, մանկահաս կինը ծիծաղելով նրան դիմաւորեց և ասաց.

— Ո՞ւր տարիր բարեկամիդ, ճանապարհ ցցեցիր, գնա՞ց...

— Այո, գնաց, Զաբիթ-բէգի մօտ պիտի գնար,—ասաց Փէհրուզը տուն մանելով։

— Դիշերս իմ հերթը կորաւ, պէտք է այս գիշեր էլ հերթը ինձ տաս...

— Լա՜ռ,—ասաց Փէհրուզը,—այս գիշեր էլ քոնն է հերթը։ Մի կոտոր պանիր տարքացրու, ուտեմ, գործի գնամ։ Իւղը առատ մի դներ, բայց լաւ դաղիր, որ նեղութիւն չը տայ,—ասաց Փէհրուզն ու ներս մտաւ։

Կինը խոհանոցում կերակուր պատրաստելիս, Փէհրուզը իր ննջարանում տխուր մտքերից տանջվում էր։ Նա ասում էր մտքում.

«Գուցէ ետևիցս դուրս եկաւ այս թեթևամիտ կինը, լրտեսեց և վրաս վատ գաղափար կազմեց, թէ ստում եմ։ Նոյն իսկ այդ ստելուս, կեղծելուս համար նա կարող է ինձ դաւաճանել, գնալ ու նայիբ-իմամներին մատնել բարեկամիս և սրա մահվան պատճառ դառնալ։ Պէտք է զգուշանալ, պէտք է աչալուրջ լինել։ Կնիկը օրէնք չունի. նրա Աստուածը իր կրքերն են. եթէ կրքից կուրացաւ, ընդունակ է ամեն տեսակ ստորութեան»։

Մինչ դեռահաս կինը մարդու համար պատիր էր տաքացնում իւղի մէջ, Փէհրուզը ննջարանում տանջվում էր այս դատն մրաքերով և չէր իմանում, թէ ինչ ընթացք բռնէ։ Երկար տատանվելուց յետոյ, առաւօտեան նախաճաշը կատարից, ապա անից դուրս եկաւ և փոխանակ ժողովարան գնալու, դրացիներին գտնելու՝ զգուշութեամբ մտաւ խոտանոց, այնտեղից դուրս բերեց բարեկամին, տարաւ մարքարամ թագցրեց։ Ապա իշաւ ուղղվեց մզկիթի կողմը։ Մինչ մի քանի ծանօթներ՝ «սալամ-ալէքում» էին ասում Փէհրուզին և պատասխան ստանում, մնալարկ ամբարը, չը մոռանալով այնտեղ տանել սէքուից անկողինը։ Յունվարի ցրտերն էին, թէև տառնամանիք չը կար Դաբարձվելում, բայց զգալի էր ցուրտը մանաւանդ ծերուկին։ Սակայն դրա առաջն էլ առաւ Փէհրուզը մի լաւ սէրդի (այծի մազից հիւսված ջէջիմ) տալով, որ անկողնի վրան քաշէ։

II

Երբ Փէհրուզը գիշերը ժողովից ետ դարձաւ, նա զգուշութեամբ մտաւ ամբարը։ Ստեփան-ափարը մրսել էր և քիչ հազում էր։ Այս միտքը վաղուց արդէն տանջել էր Փէհրուզին, թէ իր բարեկամը կարող էր մրսել, օւսաի նա ծրագրել էր մի ուրիշ տեղ փոխադրել բարեկամին։ Նա երկար մտատանջվել էր և եկել այն եզրակացութեան, որ անհնար է իր կիներից ծածուկ պահել հիւրին։ Վերջ ի վերջոյ պիտի իմանային։ Մանաւանդ որ նա չէր ուզում, որ իր կիները և դրացիները նրա մասին վատ գաղափար կազմէին և ասէին, թէ Փէհրուզը վախկոտ մարդ է։

Երբ տուն վերադարձաւ, այնպիսի աղմուկ բարձրացրեց, այնպէս զայրացաւ իր կիների վրա, այնպէս փոթորկեց տունը, որ կիները դողացին երկիւղից և չէին համարձակվում առաջ դալ։ Վերջապէս կանչեց երկու կիներին էլ և երկար սաստելուց յետոյ ասաց.

— Երդվում եմ «թալախով» (ամուսնութեան դաշնագրով), որ եթէ ձեզնից մէկն ու մէկը իմ տանս գաղտնիքը դուրս հանէ, երկուսիդ միասին միևնոյն դաշոյնով եթէ չը կտրեմ՝ երկուսդ էլ արձակված կըլինէք, ապահարզանի բաժնից անդամ զրկված։ Դուք իմ տանս տիրուհին լինէք, իմ ամբողջ կարողութիւնս ձեր ոտքերի տակ թափեմ և դուք իմ գաղտնիքներիս հետը դուրս բուրէք։

— Երդվում ենք, որ մենք քո սորուկներդ, ամենահաւատարիմ աղախիններդ ենք, Փէհրուզ-աղա, դու ոչինչ մի կասկածի։ Երկնքի թռչունն անդամ չի համարձակվի աչքերը չռել և քո կանանոցի մէջ կատարված անց ու դարձը նկատել կամ լսել։ Երդվում ենք միակ Ալլահի անունով, երդվում ենք նրա Ղուրանով և շարիաթով, որ մենք երբէք քեզ չենք դաւաճանի և երբէք էլ չենք դաւաճանելու մինչև գերեզման։

հասկացողութիւնների, մարդկութեան և ընկերակցութեան զգացումների, խղճի դէմ, քննում էր, կշռադատում էր և չէր կարողանում որոշ եզրակացութեան հանել։ Եւ միշտ զգացումները, իր ասը, իր առողջ դատողութիւնները գերակշռում էին և իրան ստիպում, թէ ինքը պարտաւոր է պաշտպանել բարեկամին՝ ինչ գնով էլ որ լինի։ Փէհրուզը հայհոյում էր մաքում այն բոլոր կարգերն ու քարոզութիւնները, որոնք լիովին ներհակ էին պատուի, խղճի և հոգու զգացումներին և թելադրում էին դաժան դահիճ լինել դէպի այն բարեկամը, որը համազգնաքով չի գլորվում իսլամի վարդապետութեան ծրագրած ուղիով։

Այս պարագային նրա մաքի առաջ կանգնում էին իր զոյգ կիները, որոնք կրօնամոլ էին և օժված ամենաստոր բամբասանքներ կատարելու։ Որպէսզի իրանից վրէժխնդիր լինեն, նրանք ընդունակ էին ամեն տեսակ դաւաճանութեան և մատնութեան։ Ի՞նչպէս պահէր իր տանը նա հային՝ Ստեփան-ափարին, որին արդէն փոքր կինը տեսել էր և գուցէ դուրը բաղխելիս գիշերը շատերն էին լսել։ Ո՞ւր պահէր այդ հայ բարեկամին, որ չը նկատէին նրա արիւնկզակ և թալանող դրացիները, որոնք Ստեփանին կողոպտելու համար միջոցների մէջ խտրութիւն չէին դնի։

Ամբողջ ժամեր այս դաժան մաքերը այնքան յոգնեցրին Փէհրուզի միտքը, որ նա շշմեց ու քնեց։

Մինչև այնտեղ վիճակի մէջ էր Ստեփան-ափարը։ Նա մտածում էր, թէ նայիբ-իմամների քարոզութիւններին ներհակ՝ կարող էր արդեօք Փէհրուզը իրան պահպանել, թագցնել։ Եթէ գիշերը նրան հետամտել էին, առաւօտ նրա թագուստի տեղը մատնելու էին Զաբիթ-բէգին, որը դահիճներին ուղարկելու էր իր բարեկամի օջախն անպատուելու։ Ի՞նչ պիտի անէր ինքը այդ պարագային։ Մթթէ աւելի լաւ չէր իր տանը սպանվել, մեռնել, քան թէ ուրիշին տանջանքների մատնել, բարեկամի վիճակը վատացնել։

Այս մաքերի շուրջը շատ ծփաց Ստեփան-ափարը, նրա հոգեկան խաղաղութիւնը յուզվեց, մրրկեց, փոթորկեց և այնքան սկսեց բարձրանալ ու իջնել, որ նա յուսաբեկ՝ չը կարողացաւ նիրհի գիրկն ընկնել։ Արշալոյսին ուժասպառ, ծիւրված և

միւսներն աւելացնում էին, թէ նա ինչի էր սովորականից ուշ դուրս եկել տնից։ Ոմանք այդ ուշանալը վերագրում էին դեռահաս կնոջը, ուրիշները խորհրդաւոր պատճառներ էին որոնում։ Փէհրուզը, կասկածելով՝ թէ մի գուցէ իրան մօտ եկած բարեկամի մասին տեղեկութիւն ունէին, լռում և սպասում էր մինչև խօսակցութիւնների վախճանը։

Անշուշտ համոզվեց Փէհրուզը, որ ոչ օք տեղեկութիւն չունէր իր հիւրի մասին, բայց ինչ-ինչ ենթադրութիւններից ստիպված իբրև կնադէմին գնաց, բարեկամին դուրս բերեց մարքից, տարաւ պահեց ախոռի սէքուն, որ թէ մաքուր էր, թէ տաք և թէ անիրկիւղ կարող էր մտնել ու դուրս դալ։ Սէքուի վրա փռված էր մենդար, գորգ և ջէջիմ, բրդի բարձեր կային, այնպէս որ Ստեփան-ափարը կարող էր անկասելի, խաղաղ քներ։ Երբ իրիկնահացը պատրաստում էին, Փէհրուզը խաշված վառիկը կիսեց, ճաշի մէջ փաթաթեց ու դուրս գնաց, իբր ախոռում իրենցացող ձիուն նայելու, բայց իսկապէս ընթրիք հասցրեց բարեկամին։ Ապա դարձաւ բազմեց սեղան, ուր դեռ կիները ներս չէին եկած։ Ուրիշ կերակուրներն էլ բերին, և երկու կինը Փէհրուզի աջ ու ձախ կողմը նստեցին։

— Վառիկի կէսը ով կերաւ,—ասաց դեռահաս կինը ամուսնու աչքերի մէջ այնպիսի հայեացք ուղղելով, որ Փէհրուզը ցնցվեց։

— Այդ ինչ հարց է,—ասաց աւագ կինը.—մինչև մեր գալը նա սովորականի համաձայն կերած կը լինի։

— Հապա ուր են ոսկորները,—ասաց կըրտսեր կինը շուրջը զննելով։

— Շանը տուի,—ասաց Փէհրուզը ակնարկելով սև շունը, որ ներս էր մտած և պոչն էր թափ տալիս։

Թէև վառիկի կէսի հետքը կորցրեց, կիները հաւատացին, թէ Փէհրուզը կերաւ, բայց Փէհրուզը կորցրեց և իր հոգեկան խաղաղութիւնը։ Նա կասկածում էր, թէ կրտսեր կինն իրան լրտեսում է։ Ուստի ընթրիքից յետոյ դուրս ելաւ, ուղղվեց դէպի ժողովարան, բայց ճանապարհի կէսից վերադառնալով տուն՝ մտաւ ախոռը, զարթեցրեց զգուշութեամբ բարեկամին և այդտեղից տարաւ նրան դէպի սիմինդրի վերը-

ՀԱՅԱՍԶԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՑ ՄԷԿԸ

—

Կարակուրա, 23 յունիսի

Այսօր Կարակուրտի ամբողջ զինուորականութեան համար, իսկ գլխաւորապէս հայ փոքրիկ գաղութի համար մեծ տօն էր։

Ամբողջ զինուորականութիւնը, գլուխ ունենալով կօրպուսի հրամանատար Կ.-ին և գեներալ Բ.-ին՝ իրանց շքախմբերով, նուագախմբերով և զօրաշարքերով՝ ընդունեցին հայկական 6-րդ դրուժինան, որ դառնում էր պատերազմի դաշտից յաղթական ճիշդ երեկոյեան ժամը 6-ին Կարակուրտ մտան հայ քաջերը՝ գլուխ ունենալով օրվայ հերոսին՝ յանձին նոյն դրուժինայի փոխ-հրամանատար Հայկ Բժշկեանի, որը վիրաւորված էր 3 անգամ և փաթաթված վիրակապների մէջ՝ ղեկավարում էր իր վաշտը։ Դրուժինան կանգնեց յատուկ իր համար որոշված շարքում, իսկ օրվայ հերոսին հրաւիրեցին կօրպուսի հրամանատարի մօտ։

Ընդունելութիւնը շատ փառաւոր էր և սրտառուչ։ Գեներալը գրկաբաց ընդունելով հերոսին և քանիցս համբուրելով՝ թեւացուկ ներկայացրեց նրան իր մեծին յայտնելով հետեւեալը.

«Ձերդ գերազանցութիւն, թոյլ տուէք ներկայացնելու մի քաջի, որը 3 անգամ կռիւներում վիրաւորվելով՝ մնացել է շարքերի մէջ և, անցած իր վաշտի գլուխը, վանել է 2000-ից աւելի թշնամուն՝ մղելով անհաւասար կռիւ ծանրագոյն պայմաններում, գրաւել է 4 գիւղ՝ վանելով թշնամուն մօտ 35 վերստ առանց դադարի և հանգըստութեան, և որը կառավարել է ծանր պայմանների տակ իր զօրախումբը՝ երբ նոյն զօրախմբի հրամանատար Գ. Աւշարեանը քաջաբար ընկել էր թշնամու մահաբեր գնդակներից»։

Կօրպուսի հրամանատարը, իր հերթին, լսելով հերոսի քաջագործութիւնները, գբրկեց և համբուրեց նրան քանիցս, հարցնելով կռիւները և իր ստացած վէրքերի մասին, և ապա հրաւիրեց զօրահանդէսի, որտեղ հազարաւոր ուռաների և մարշերի նուագների տակ պարգևատրեց նրան ս. Գէորգի խաչով և մէդալով։ Բոլոր տեսարանները նկարվեցին։

Մէդալներով վարձատրվեցին նմանապէս հայկական 6-րդ դրուժինայի վիրաւորները հիւանդանոցում, որտեղ այցելեց նրանց թէ կօրպուսի հրամանատարը և թէ գեն. Բ.-ն։

Ն. Գ.

Բ. Գ.—Հայկ Բժշկեանը երկու անգամ ևս ներկայացված է իր քաջութեան համար շքանշանի, որը կը ստացվի որոշ ժամանակից յետոյ։ Բժշկեանը թողնում է դատարկված մարդու տպաւորութիւն, խօսում ու դատում է կրթված զինուորականի պէս, թէև զինուորական չէ եղել բնաւ։ Նոյն

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

(Ռազմա-արդիւնաբերական շարժման առիթով)

IV

Լաւ է ուշ, քան երբէք։

Ակամայ այդ հնամաշ, բայց միշտ նորարժէք ֆրազն էք արտասանում, դիտելով վերջին շաբաթների տենդային պատրաստութիւնները մեր ծովածաւալ երկրի բոլոր խոշորագոյն՝ ռազմա-արդիւնաբերական հողի վրա։

Ֆրանսիայում աւելի վաղ, Մարնի խոշոր ճակատամարտից յետոյ, սկսվեց արդիւնաբերութեան մոբիլիզացիան։ Բայց այն արագութիւնը, այն կազմակերպական թափը և կանոնաւոր սիստեմատիզացիան, ճիւղերի և ֆունկցիաների այն օղակաւորված կենտրոնացումը, որ Գերմանիան ամենայն խընամքով մացրեց վիթխարի գործի մէջ, դժբաղդաբար տեղի չունեցաւ նոյն չափերով Ֆրանսիայում։ Ի հարկէ, պատերազմական և ընդհանուր արդիւնաբերական տեխնիկան Ֆրանսիայում չի հասնում իր զարգացումով գերմանականի բարձրութեան։ Բայց դա նշանակում է, որ Ֆրանսիան էլ աւելի պիտի լարէր իր ոյժերը և կազմակերպական գործով լրացնէր որակի պակասը։ Այնու ամենայնիւ անուրանալի է, որ վերջին ամիսների ընթացքում, երբ ֆրանսիական բանակները սուսկ պաշտպանողական դիրքերն էին բռնել ամենայն յամառութեամբ՝ ետ մղելով ուժեղ թշնամու բոլոր կատաղի յարձակումները, Ֆրանսիայում շատ մեծ գործ է կատարվել՝ պատերազմական հրամայական կարիքներին բաւարարութիւն տալու համար։ Զինուորական մինիստրութեան կից հիմնվել է մինիստրի օգնականի մի յատուկ բաժանմունք՝ բացառապէս զօրքի ուտեստի պաշարը հոգալու համար։ Բայց այդ սկզբնական քայլը անբաւարար է գտնվել։ Որոշվել է աւելացնել չորս օգնականներ ևս, ինտենդանտութեան, ինժեներական և օդագնացային, զօրքի տեղափոխութեան և ռազմանիւթերի, ինչպէս և սանիտարական մասերի համար։

Արդի պատերազմը—դա guerre de munitions է. խորապէս ըմբռնել է Ֆրանսիան այդ գաղտնիքը։ Աջող պատերազմելու և յաղթանակելու համար նոյնքան անհրաժեշտ է գործարանների և արհեստանոցների ինտենսիվ արտադրութիւնը, ռազմանիւթերի առատ պաշարը, օրքան անհրաժեշտ է խոշոր բանակը և սրա ինքնամոռաց էնթուզիազմը։ Այդ գիտակցութեան շնորհիւ է, որ Ֆրանսիական կառավարութիւնը ետ է կոչել ֆրօնտից այն բոլոր պրոֆեսիոնեների ներկայացուցիչներին—ինժեներներ, վարպետներ և բանւորներ—որոնք երկար աշխատանքով կարող են զարկ տալ թնդանօթների և այլ հրաձիգների արտադրութեան գործին մինչև գերագոյն չափերը։

Մի շարք տուեալներ ի նկատի առնելով կարելի է համարձակ ասել, որ ներկայումս Ֆրանսիական ռազմաբանակները (անգլիականի հետ միասին) տեխնիկական պատրաստութեամբ և զօրաթիւով ետ չեն կանգնում գերմանականից արևմտեան ֆրօնտում, եթէ միայն հաշի առնենք այն հանգամանքը, որ գերմանական բանակների յաճախակի տեղափոխութիւնը՝ մի ֆրօնտից միւսը, անխուսափելի է դարձնում մշտական ուժաստպառումների և մթերակօրուստների վտանգը։

Ֆրանսիայի օրինակին հետևեցին միւս դաշնակիցները՝ Անգլիան և Ռուսիան։

Իրրև ծովային պետութիւն՝ Անգլիան եղել է մշտապէս պատերազմական՝ կատարեալ պատրաստութեան մէջ ծովի վրա՝ թէ զինուորական ոյժերի և թէ ռազմանաւային տեխնիկայի նկատմամբ։ Բայց Գերմանիայի ցամաքային վիթխարի ոյժը պահանջում էր նաև Անգլիայից՝ իր դաշնակիցների նման լարելու իր էներգիայի մաքսիմումը ցամաքային պատերազմի համար։ Դա, իսկապէս, վերին աստիճանի ծանր կացութիւն է մի երկրի համար, ուր գոյութիւն չունի մինչև օրս զինուորական ծառայութեան պարտադիր սկզբունքը։ Մի մեծ պետութիւն, որ պահում էր խաղաղութեան ժամանակ ընդամենը 250,000 զօրք, իսկ պատերազմի ժամանակ դաշտ էր հանում 700,000 զօրք (իր գաղութային և տերրիտորիական բոլոր հատուածներով), հարկադրված է եղել ներկայ պատերազմին տալի հանելու 2—2½ միլիոն մի խոշոր բանակ, Անգլիայի յարաբերութիւնների տեսակէտից մի անհերևակայելի թիւ։ Միայն Անգլիայի նման ֆինանսներով այնքան հարուստ և արդիւնաբերական տեխնիկայով կատարելատիպ զարգացման հասած երկիրը կարող էր դիմագրաւել անակնկալ դժուարութիւններին և տէր դառնալ վերահաս սիտուացիային։

Այդպէս էլ եղաւ, թէև քաւական ուշ։

Ազատամիտ և պանդխտանողական կուսակցութիւններից խառն մինիստրութիւն կազմվելուց յետոյ, անգլիական կառավարութիւնը ձեռնարկեց արդիւնաբերական մոբիլիզացիայի գործին, կենտրի կոչելով դրա համար մի յատուկ մինիստրութիւն՝ «սպառազինութեան մինիստրութիւն» անունով, որին գլուխ է կանգնել անգլիական նախկին ֆինանսական մինիստրը՝ տաղանդաւոր Լլոյդ Ջորջը։ Թէ ինչ միսսիա է յանձնարարված նրան և ինչպէս է հասկանում նա իր գործունէութեան ծրագիրը, դա երևում է նրա պատմական ճառերից, արտասանված Մանչեստրի և Լիվերպուլի բանկէտներում։

Պէտք է կազմակերպել երկրի ինդուստրիական արտադրութիւնը պատերազմական գործի կարիքների համար. պէտք է կրճատել և անգամ դադար տալ այնպիսի արդիւնքների արտադրութիւնը, որոնք բացարձակ անհրաժեշտ չեն, որպէսզի կարելի լինի դրանով ազատել ոյժեր և մեքենաներ՝ զօրքի և նաւատորմի շահերին կատարելապէս ծառայեցնելու համար։ Հենց այդ պատճառով պէտք է կառավարութիւնն իր ձեռքը կենտրոնացնէ հսկողութիւնն այնպիսի արդիւնաբերական ճիւղերի վրա, ինչպէս են օրինակ մետալուրգիական, քիմիական, նաւագործարանային և այլ ճիւղեր. պէտք է կազմակերպել կենտրոնական և տեղական կոմիտէներ, ի հարկէ պետական իշխանութեան անմիջական մասնակցութեամբ. այդ կոմիտէները պէտք է քննեն և լուծեն այն հարցը, թէ ի՞նչ արդիւնաբերական տեսակներ պիտի անցնեն կառավարութեան հսկողութեանը պատերազմական նպատակների համար և ինչ կարգի լուծումներ, շքեղութեան վերաբերեալ ապրանքների արտադրութիւնը պիտի կրճատել կամ դադարեցնել և ինչ չափերով։ Այնուհետև բանւորներին պիտի պարտաւորեցնել, որ զարգացնեն իրանց մաքսիմալ աշխատանդուանակութիւնը։ Արհեստանոցներում և գործարաններում պիտի մացվի 24 ժամվայ աշխատանք, ի հարկէ մի շարք փոխանակութիւններով։

Ահա Լլոյդ Ջորջի գործունէութեան ծրագիրը. երկրի բոլոր ինդուստրիական ռեսուրսների ամենահաստատուն կազմակերպութիւնը՝ ըստ հնարաւորին մեծ քանակով թնդանօթներ, հրացաններ, գնդակներ, պայթուցիկ նիւթեր և այլ ռազմամթերք պատրաստելու համար։ Անգլիական մինիստրի կոչը երկրի բանւորներին ուղղած, պատերազմա-արդիւնաբերական ճիւղերում կամաւորապէս աշխատելու համար, առել է այն հետևանքը, որ մօտ մի ամսում, մինչև յունիսի 31-ը, 67,000 աշխատանքի կամաւոր բանւորներ են գրվել։

Անգլիականի օրինակին հետևեց ռուսականը՝ ճիշդ նոյն ծրագրով ու մեթոդով։ Մեզ մօտ ռազմա-արդիւնաբերական գործի կազմակերպութիւնը անշուշտ դեռ իր սկզբնական ֆազումն է գտնվում։ Արագ թափով կազմակերպում են բազմաթիւ կոմիտէներ զանազան քաղաքներում։ Մինչև յունիսի 23-ը կազմվել են արդէն 30 այդպիսի կոմիտէներ, օրենց ներկայացուցիչներից պիտի համալսարանի Պետրոգրադում, գլխաւոր կոմիտէի հրաւէրով, ոչ ուշ քան մինչև յուլիսի 10-ը։ Ինչպէս տեսնում էք, մեր մէջ գործը դեռ խօսքի, ժողովների, տաք վիճաբանութիւնների շրջանումն է։ Ի հարկէ, կան քաղաքներ, որոնք զուրկ են արդիւնաբերական կարևոր ճիւղերից (այդպիսիներից մէկն է հենց մեր մեծախօս Թիֆլիսը) և այդպիսի քաղաքների կոմիտէները հազիւ կարողանան ռազմա-արդիւնաբերական շոշափելի ծառայութիւն մատուցանել ընդհանուր գործին։ Բացի դրանից, մեր երկրի թէ ռազմական և թէ ընդհանուր արդիւնաբերական տեխնիկան չունի տակաւին զարգացման այն բարձրութիւնը, որ կարողանայ արագ և բազմակողմանիօրէն բաւարարութիւն տալ խոշոր պահանջներին, ուստի բնական է, որ Ռուսաստանի դաշնակիցները, ամենից առաջ Անգլիան, վերցրել են ռուսական պատուէրներ։ Նորերս Լոնդոնի բորսայում կնքած ռուսական նոր փոխառութիւնը՝ 50 միլիոն ֆունտ ստերլինգի (կամ մօտ 500 միլ. ռ.)՝ հենց այդ նպատակն էլ ունի՝ հոգալ արտասահմանում տուած պատուէրների ծախքերը։

Այսպէս, տեսնում ենք, որ պատերազմի յամառ տևողութիւնը հարկադրեց համաձայնութեան անդամներին ևս այն հսկայ գործի կազմակերպութեանը ձեռնարկելու, որի հիմքը պիտի դնէին նրանք դեռ պատերազմի սկզբում։

Կազմակերպութիւն բանտորական աշխատանքի, արդիւնաբերական ճիւղերի, հասարակական օժանդակ ոյժերի։ Ահա այն ընդհանուր լոզունգը, որի շուրջը ալիքաւորվում են ներկայիս հանրական ուշադրութիւնները։

Արդիւնաբերական տեխնիկայի մատակարարած գործիքների և նիւթերի մասնակցութիւնը նորագոյն պատերազմական արուեստի մէջ այնքան անհրաժեշտ է, այնքան հզօր ու տիրական, որ առանց չափազանցութեան կարող էինք ասել. ինչպէս, ըստ հինաւուրց պարոլի, չը կայ պատերազմ առանց զինորի, այնպէս էլ, ըստ այժմեան յարաբերութիւնների, չը կայ պատերազմ առանց արդիւնաբերական տեխնիկայի։ Ռազմամթերքի համար նորակառոյց գործարանը նոյնքան անհրաժեշտ է, օրքան նորակազմ ռազմական կօրպուսը, պատերազմական ինժեները նոյնքան անհրաժեշտ է, օրքան դիվիզիայի գեներալը. հրացան պատրաստող վարպետ բանւորը նոյնքան անհրաժեշտ է, օրքան կուռ զինուորը։

Ահա թէ զարգացման և կիրառման ինչ պայմանների մէջ է դրել կապիտալիզմը պատերազմական արուեստը։

B. Lucifer

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Էուրեբ ընթացիկ կեանքից

Ցարսկիէ-Կօլօդցի, 3 յուլիսի

Վարդավառին աշակերտներն ու աշակերտուհիները հայոց դպրոցի պաշտամբում ներկայացրին «Поздравление» և «Նոր ընկերուհի» մանկական պիէսները։ Վերջը արտասանեցին տատանաւորներ հայերէն և ռուսերէն, որոնք ընդմիջվում էին երգերով։ Օրիորդ Աշխէնը աջող արտասանեց «Ցարութիւն» ոտանաւոր Ա. Գրիգորեանի։ Խաղը գոհացուցիչ էր։ Զուտ արդիւնք մնաց 19 ռ., որ յատկացվեց տեղիս գր.-ընթերցարանին։

Մի շաբաթ առաջ սարքվեց մեծ զբօսանք յօգուտ Կարմիր Խաչի։ Մասնակցում էին ռուս, հայ, վրացի։ Այդ զբօսանքն առաջինն էր Ցարսկիէ-Կօլօդցիում։ Զուտ արդիւնք մնաց 110 ռուբլի։

Երեքշաբթի գիշերը մի դալ մանում է աւանիս կենտրոնում եղած մի տան բակը և լափում է ու խեղդում երեք ոչխար և մի ուլ։ Քիչ առաջ ուրիշ տան բակից դալը յափշտակեց մէկ ոչխար։ Առ հասարակ շրջակայքի դալերը յաճախ արշաւանքներ են կատարում աւանի վրա և յափշտակում ոչխարներ։

N. N.

Դարաղ հիւանդութեան հեռհեռաձիրը

Շնող գիւղ, 30 յունիսի

Շնող և Հաղբատ գիւղերում անասունների մէջ կատաղի կերպով տարածված է «դարաղ» կոչված հիւանդութիւնը։ Ոտքերից բռնված լծկանը չէ լծվում, և գութանավարը առաջ է տարվում մեծ դժուարութիւններով։ Ի՞նչ է լինելու արդեօք գիւղացու դրութիւնը մի 20 օրից յետոյ, երբ հարկաւոր լինի խուրձը դուրը բերելու և բերածը կալսելու. եթէ այսպէս շարունակվելու լինի, ոչ մի յոյս չը կայ, թէ գիւղացին կարող կը լինի օգտվել իր օգնական լծկանից, քանի օր նա բռնված է «դարաղով»։ Ցիշեալ գիւղերի անասնից շատով դիմում է լինելու Հայ Գիւղատնտ. և Տնայն. Ընկերութեանը, որպէս զի սա դեղեր և ցուցումներ տայ գիւղացիներին այդ հիւանդութիւնը բժշկելու։ Այլապէս՝ աշխատող ձեռքերից զուրկ գիւղացիները զրկվում են նաև լծկան անասուններից։ Ցանկալի է, որ Հայ Գիւղ. և Տնայն. Ընկ. ընդ առաջ գնայ և օգնութիւն անի։

Բ. Մկրտումեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Գերագոյն Զօրահրամանատարից Թիֆլիսի Բօրսային Կոմիտէի նախագահ Ա. Միլիանը ստացել է հետևեալ հեռագիրը. «Արտանց զգացված եմ և շնորհակալ՝ արդիւնաբերութեան ներկայացուցիչների համակրկասեան խորհրդակցութեան արտայայտած զգացմունքների և օղջոյնի համար. գեն.-ադիւտանտ ՆԻԿՕԼԱԵՎ»։ Այս հեռագիրը ստացվեց ի պատասխանի Միլեանի ուղարկած հեռագրի։

◆ Այսօր նշանակված է Թիֆլիսի պոլիտեխնիկումի կառուցման խնդրով զբաղվող յանձնաժողովի հերթական նիստը։

◆ Ներկայումս Թիֆլիսում շաբաթի սովը անցած կարելի է համարել. ամեն օր վագոններով շաքար է ներմուծվում քաղաք։ Քաղաքային վարչութիւնը 150 վագոն ալիւր է գնել Բոսուսի յայտի Պորմանով ֆիրմայից։ Թիֆլիսից մեկնել է յատուկ անձն վարչութեան կողմից, որպէսզի ալիւրի առաքումը կատարվի իր ժամանակին։

◆ Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլխի պաշտօնակատար իշխ. Դ. Զէլօկայեվը իշխ. Կ. Աբխազիին ուղարկել է գործող բանակը այսպիսի հեռագիր. «Ազնուականութեան պարագլուխները և պատգամաւորները, ժողովվելով առաջին անգամ ընտրութիւնների հատատութիւնից յետոյ, Կախէթի երկաթուղու մասնաժողովի անդամների հետ միասին, բուռն ողջունում են ձեզ հեռաւոր հայրենի Վրաստանից։ Մենք հպարտ գիտակցում ենք, որ մեր աւագ ընկերը քաջաբար կռւում է հայրենիքի թշնամիների դէմ կռւի դաշտում, իրականացնելով այդպիսով նախնիների բարձր պատգամները։ Կենդանի է մեր մէջ այն յոյսը, թէ կռւի քաջութիւններից յետոյ մենք կը տեսնենք ձեզ մեր մէջ և մեր գլուխ, կը շարունակենք մեր հասարակական ծառայութիւնը»։

— Ոչ աչքով, ոչ ուսով, ոչ ժպտով, ոչ ձայնով, ոչ շուացնելով, ոչէլ լեղուով կամ դէմքի ծամածութեամբ օչ օք չը պիտի ըմբռնէ, կամ կասկածի, թէ իմ յարկի տակ օրևէ գաղտնիք կայ։ Ապա թէ ոչ ձեզ օրպէս խալամի պետական մասնիչի և դաւաճանի կոչոտոր կը մանրեմ և Շաւշէթի գետը կը թափեմ, որ ձկներին կեր դառնաք։

— Մենք ծնվել ենք քեզ համար ստրուկ։ Նախախնամութիւնը մեզ սահմանել է, որ մենք ծառայենք Փէհրուզ բէգի դռանը կապված գրատների և շների հետ։ Մեր կեանքը կախված է քո կամքից. հրամայիր, և ամեն բան կը կատարենք։

— Հրամանս մէկ է, ինչպէս օր Ալլահն էլ մէկ է։ Գաղտնապահութիւն, մեր «սըրը» (ներքին գաղտնիքները) ոչ օք չը պիտի իմանայ... Դէհ գնացէք, մնդուկներիս օղախում (ռանդուկխանա) մի ձեռք փափուկ անկողին պատրաստեցէք...

Այս հրամանից յետոյ, գնաց Փէհրուզը և իր ննջարանն առաջնորդեց Ստեփան-ափարին, ուր նա մի քանի բաժակ թէյ խմեց իր բարեկամի հետ, մինչև անկողին մանելն ու քնելը։ Երբ շատ էր մտածում Ստեփան Թորոյեանցը, Փէհրուզն ասաց.

— Բարեկամս, հերիք մտածես, այս էլ կանցնի...

— Չը մտածեմ, ապա ինչ անեմ։ Ես ազատվեցի, այլ ևս ոչ մի երկիւղ չունեմ։ Ապա ի՞նչ անի մեր Աղաւնին՝ կինս։

— Ես մտածել եմ, նա վաղը իրիկուն կը լինի մեր տանը։ Մուխալ-օղլի Սիւլէյմանին ուղարկեցի, որ գնայ ու բերէ։

— Ես նրա մարդկութեան, քաջութեան, մանաւանդ բարեկամութեան մասին ոչ մի կասկած չունեմ։ Նա կարող է և ինձ միայն բարեկամութիւն կանէ։

Իսկ և իսկ հետևեալ գիշերը Սիւլէյմանը բերեց տիկին Աղաւնուն, հասցրեց Փէհրուզի տունը։ Ամուսինները ամբողջ երկու ամիս մնացին Փէհրուզի և Սիւլէյմանի տանը, իսկ ոչ Դաբարձվէլ գիւղում մարդ չիմացաւ, թէ Թորոյեանց ամուսինները այնտեղ են։ Մի քանի անգամ կասկածներ հասել էին Զաբիթ-բէգին և Ֆաւաթ բէյին, որոնք լրտեսներ էին ուղարկել քննութեան։ Փէհրուզը կանխապէս իր տնից ծպտեալ կերպով Սիւլէյմանի տունն էր փոխադրել տուել Թորոյեանցներին և ապա խուզարկուներին տարել էր իր տունը 3—4 օր պահել, մինչև որ վերջիններս լիովին համոզվել էին, թէ կասկածները զրպարտութիւններ են, և ճանապարհ էին ընկել։

Երբ Սիւլէյմանի տունն էին խուզարկում, ապատանածները ծպտեալ փոխադրվում էին Փէհրուզի տունը, և ընդհակառակը։ Այսպիսի ճնշված և սրատաղ ժամերով օրեր ու ամիսներ ապրեցին Թորոյեանցները Դաբարձվելում յունվարի 10-ից մինչև մարտի 10-ը։ Այնքան մտերմացան իրար, որ լիովին մոռացան, թէ նրանք կրօնամոլ մահմեդականներ են և դահիճ. սրանք էլ հատատամիտ քրիստոնեաներ են և յամառ հայեր, իրանց հայրենիքին ու աւանդութիւններին անքակտելի կերպով միացած ու շաղկապված։

Մէրիքայի դաղին՝ մոլլա Բաւշէին կրաբած էր Զաբիթ-բէգի, մանաւանդ Ֆաւաթ բէգի հանգստութիւնը, թէ անհրաժեշտ է օր առաջ գտնել Ստեփան Թորոյեանցին և տանել, որպէս զի նրանից դուրս բերեն ահաւոր հարստութիւնը։

— Եթէ նրան տանէք,—ասում էր մոլլա Բաւշէին,—լաւ իմացէք, որ տաբ-քսան հազար լիրա կարող էք դուրս բերել նրա թագստոցից։

Վէլ գիւղացի մոլլա Քեամիլ Մուրադ-օղլին դեռ կռւից առաջ Կ. Պոլիս տուած զեկուցումների մէջ պարծեցած էր, որ ինքը միայն Ստեփան Թորոյեանցից կարող է դուրս քաշել յիսուն հազար լիրա։ Այդ պատճառով թիւրքական բոլոր պաշտօնակալները մտածում էին ձերբակալել Թորոյեանցին, գաղտնապէս պակել նրա հարստութիւնը։ Ստեփան Թորոյեանցի փախուստը աւելի զրգռեց ու բորբոքեց նրան։ Կոզոպտելու տենչով վառվածներին, ստիպեց աւելի ևս մեծ եռանդով փնտռելու։

Թէև յունվար ամսի մէջ մեր զօրքերը գնացին և պաշարեցին Շաւշէթի բարձունքը և չը թողին, որ չէթաները կարողանան յարաբերութիւն պահպանել Արդանուշի ճանապարհով Թիւրքիայի հետ, թէև Սախարա սարի լանջի և Խանթուշէթի զօրանոցները գրաւեցինք, բայց ձիւնի սաստկութեան, ճանապարհների բացակայութեան պատճառով մեր զօրքը չը կարողացաւ մանել Շաւշէթ և մաքրել երկիրը չէթաներից։ Այս պատճառով թիւրքերի առաջնորդները սաստիկ վախենում էին, որ յանկարծ կարող են ռուսները մանել Շաւշէթ և չարագործներին ու դաւաճաններին պատուհասել։ Փնտռում էին Ստեփան-ափարին, բայց գաղտնապէս, իսկ նրա պատճառով չէին ցանկանում Շաւշէթի թուրք ազգաբնակութեան մէջ խլրտում առաջացնել կամ ներքին կռիւ մղել։

Ամբողջ երկու ամիս Ստեփան Թորոյեանցին և կնոջը Դաբարձվէլ իրանց բնակարանում պահելուց յետոյ, երբ մարտի սկիզբներին Սախարայի և Խանթուշէթի սարերից ցած իջան ռուսները և սպառնում էին չէթաներին վռնտել Շաւշէթից, երբ թիւրքերը յուսահատվեցին հայերին ընաջնջելու գաղափարից, Փէհրուզը և Սիւլէյմանը մի գիշեր գաղտնապէս դուրս հանեցին Դաբարձվէլից իրանց բարեկամին ու կնոջը և տարան Օքրօքագէտ, յանձնեցին ազգակիցներին։ Ոչ միայն Դաբարձվէլի թուրքը չիմացաւ Թորոյեանցի իրանց դրացի Փէհրուզի տանը ապրելը, այլ Օքրօքագէտի հայերն էլ չիմացան, թէ Թորոյեանցն իրանց մէջից հեռացած էր։

Այդ ժամանակ ճնշումներից մատնիչ դարձած մի քանի հայեր, մանաւանդ թուրք փեսայ ունեցողները մատնեցին Զաբիթ-բէգին, թէ Թորոյեանցը վերադարձել է Օքրօքագէտ, բայց թէ ուր է պահվել, նորից չը կարողացան գտնել։ Սակայն այդ մատնիչները համոզված էին, որ Թորոյեանցի իսկական բարեկամն ու խորհրդակիցը Դաբարձվելում Փէհրուզն է, որին մատնեցին Զաբիթ-բէգին։ Այս գաղանը, որ նիհար ու կարճահասակ մի ագէտ էր, բայց խիստ նենգամիտ, կանչել տուեց իր մօտ Փէհրուզին, պահանջեց, որ իրան յանձնէ Ստեփան-ափարին։

— Ես քեզ կախել կը տամ,—ասում էր Զաբիթ-բէգը Փէհրուզին,—որպէս դաւաճանի, որպէս պետական մատնիչի։ Դու ի՞նչպէս համարձակվեցիր պահել քո յարկի տակ այն գեավուրին, որը ռուսների հետ յարաբերութեան մէջն է և նրանց հրաւիրում է Շաւշէթ, որպէս զի մեզ նորից յանձնէ մեր թշնամու սրին։ Ուրեմն դու ոչ միւսլիման ես, ոչ էլ թուրք, քեզ մօտ ոչ հաւատի թասիբ կայ, ոչ էլ միլլէթի (ազգ)։ Եթէ դու ետ չը բերես և ինձ չը յանձնես Ստեփան Թորոյեանցին, ես քեզ սպանել կը տամ, մոլլաների ձեռքով քարկոծել կը տամ։ Քեզ նման դաւաճան և հայասէր թուրք թող չը լինի մեզ համար։ Թող իսլամից մի օձ, մի կարիճ պակասի։

Այս խօսքերից յետոյ, սկսեց մտրակել Զաբիթ-բէգը Փէհրուզին, ծեծել տուեց իր սպասաւորների ձեռքով, այնպիսի նախատինք ու հայհոյանք տեղալով նրա գլխին, որ Փէհրուզը պարտաւորված դաշոյնը դուրս քաշեց և սպառնալիքներ կարդալով ասաց.

— Դու մեզանից, դու ինձանից ինչ ես ուզում, գաղան, Տեփան-աղան եկաւ մեր տունն, մի քանի ժամանակ կացաւ ու գնաց։ Ո՛չ օրտեղից գալը գիտեմ, ոչ էլ ուր գընալը։ Դու ես հրամանատարն ու զօրապետը, քո ձեռքի տակ են գործում 2000 չէթաները. փնտռիր ու գտիր։ Ես ինչէ պիտի թիւրք լինեմ, թիւրքը դու ես, փառք Ալլահին, ես միւսլիման եմ, իսկ միւսլիմանը ազգ չունի։ Եթէ ազգս ես փնտռում, մեր պապերը Շաւշէթում բոլորն էլ հայեր էին, ոչ մի թիւրք աշիրէթ ու վայրենի չը կայ մեր մէջ, իսկ Իմերխէվի մէջ էլ վրացի են։ Աւելի լաւ է հային օգնել, քան թէ քեզ նման խալամին, որ խալամը երեսիդ քող ես շինել, ուզում ես աշխարհին թիւրքացնել։ Մենք թիւրք չենք, մենք խալամ ենք։

Այս խօսքերն արտասանելիս կատաղում էր ինքը Զաբիթ-բէգն էլ, հայհոյում էր, բայց այնպէս էր բորբոքված Փէհրուզը, որ եթէ նորից նրա վրա յարձակվէին, 50 չէթա կը սպանէր։ Մանաւանդ որ չէթաները արդէն երես էին թեքել Զաբիթ-բէգից, որովհետև ոչ ռոճիկ էր տալիս, ոչ էլ ապրուստ, հայերին էլ այնպէս էին թալանել, որ էլ բան չունէին թալանչիներին տալու։

— Դաւաճանն ու աւազակը դու ես, որ ոչ միայն շարիաթն ես ոտնահարում թիւրքերի ազգասիրութեան համար, այլ ուրացել ես քո ազգութիւնը և թիւրքացել։ Թէ թիւրքն իր միլլէթի համար է ձգտում, դու էլ այնքան խելք պիտի ունենաս, որ քո միլլէթի համար ձգտես,—շարունակեց Փէհրուզը՝ Դաբարձվէլի ճանապարհը բռնելով.—իսկ եթէ համիսլամութիւնն են քարոզում, թող իրանց թիւրքութիւնից ձեռք քաշեն։

Երբ յոյսը կտրեց, չը կարողացաւ Փէհրուզից մի բան տեղեկանալ, Զաբիթ-բէգը Վէլից գնաց Օքրօքագէտ, կանչեց իր մօտ հայերին և ասաց նենգամիտ սրտով և կեղծաւոր լեզուով.

— Ո՞րտեղ է Տեփան աղան, ասացէք՝ թող գայ. ես նրան պիտի վերադարձնեմ նրա տունն ու տեղը, փողն ու կարողութիւնը։ Մենք որպէս հայր ու որդի իրար հետ ապրենք։ Նա հայրս դառնայ և ինձ հրամայէ, ես էլ նրա խոնարհ օրդին։ Նրա հացը այնքան եմ կերել, իմ չէթաները այնպէս են կշտացել նրա դրանը, որ մենք երախտապարտ ենք նրան։

Երբ այս շողոքորթ լեզուով նպատակին չը հասաւ, սկսեց Օքրօքագէտի հայերին սպառնալ.

— Դուք ասում էք, թէ չը գիտէք, չէք տեսել նրան, ես հիմա ողջ գիւղը խուզարկել կը տամ, եթէ գտայ, ձեզանից ոչ մի մարդ ողջ չէ մնայ։

— Բէգ էֆէնդի,—ասում էր ժողովուրդը,—նա փախաւ, դեռ չէ վերադարձել։ Ո՞ւր է գտնվում՝ մեզ անյայտ է, ասում են՝ Արդահան է գնացել։

Ամբողջ 7 օր Զաբիթ-բէգը փնտռել տուեց Ստեփան-ափարին, և երբ նրան գտնելու յոյսը կտրեցրած էր, իր գլուխն էլ փրկելու յոյսից զրկվեց։ Մարտի 10-ին մեր զօրքերը իջան Շաւշէթ, մտան Սաթլել, իսկ 11-ին արդէն տիրեցին ոչ միայն Օքրօքագէտին, Շաւշէթին, Վէլին ու Դաբարձվէլին, այլ ամբողջ Շաւշէթ։ Իմերխէվը անձնատուր եղաւ։

Զաբիթ-բէգը մարտի սկզբին 600 չէթայի շալակները 600 պուդ ալիւր էր բարձած և Բերդայի ճանապարհով Արդուին էր ուղարկած, որ գնան ու տեսնեն զէնք բերեն Շաւշէթ։ Այս 600 հոգին գլորվել էին մեր կօզակների գնդ-կի կարկուտի տակ Բերդա ձորում և լցվել Շաւշէթի չայը։ 1000 հոգի էլ Արդահան էին գլորվել, մի 400 հոգի էլ փախել ու կորել էին։ Վերջին 500 հոգուն էլ Զաբիթ-բէգը առաջը խառնեց, որ փախչեն, բայց թէ որտեղ գլորվեցին, մինչև օրս մը նաց անյայտ։

Մարտի 11-ին մեր բանակը Օքրօքագէտ մտնելուց յետոյ, Ստեփան ու Աղաւնի Թորոյեանցները մնացեալ հայերի հետ դիմաւորեցին զօրքին ու զօրապետներին, արտասուալի աչքերով համբուրվեցին և ազատվեցին թիւրքական խժդժութիւններից։

Ատրպետ

Մ Ա Ն Ա Կ

Մանկական գրականութիւն

Ամսական 50 կոպ.

Տարեկան 6 ռուբ.

Հասցէ՝ Թիֆլիս, Գ. Գ. Ամիրեանի տպարան։

Այս տարի Թիֆլիսի նահանգում ևս խաղողի բերքը շատ անբաւարար է։

Թիֆլիսի շուկայում սոսկալի գներ են նոյնիսկ տեղական այն մթերքների համար, որոնք սովորական տարիներում վաճառվում էին շատ արժան։ Բաւական է ասել, որ աւելորդը, որ անցեալներում այս ժամանակ վաճառվում էր 3 ֆունտը 10 կոպէկ, այժմ 20 կոպէկից պակաս ֆունտը չի կարելի ձեռք բերել, իսկ 15 կոպէկով արդէն փչացածն են ծախում։ Թիֆլիսում ոսքի տակ գնացող կանանչին այժմ 5 կոպէկից պակաս ձեռք չի բերվում. ամենավատ տանձի ֆունտը 10 կոպէկ և այլն և այլն։

Կովկասի պօստ-հեռագրական շրջանի կառավարիչ Մուսէլիուսը մեկնել է Կարսի շրջանը։

Ստացանք Երևանի վիճակագրական Յանձնաժողովի հրատարակած «Միօրեայ վիճակագրութիւն Տաճկաստանից ու Պարսկաստանից եկած գաղթականների և ռուսահպատակ փախստականների (հայ, ասորի, յոյն և այլն) 1914—1915 թ.» գիրքը, որ բաղկացած է 83 էջից։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

Վ. ՏՕՏՕՄԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

II

Դարձեալ մի քանի խօսք բոչէլեան սպառող. ընկերութեան մասին։

Բոչէլեան սպառողական ընկերութեան պիոնէրների մշակած վարչական եղանակը մինչև այժմ էլ գործադրվում է շատ աննշան փոփոխութեամբ։ Նրա կօմիտէը կազմված էր 11 անձնաւորութիւններից, որոնք ընտրվում էին ընդհանուր ժողովում։ Կար նաև մի ուրիշ կօմիսիա, որ հսկում էր առևտրական գործողութիւններին և հաշուապահութեանը. այդ մարմինն էլ ընտրվում է ընդհանուր ժողովում։

Բոչէլեան սպառ. ընկերութեան պիոնէրները սկզբում 28 հոգի էին, իսկ երբ ընկերութիւնը դարձաւ արտօնեալ, նրանց թիւն հասաւ 40-ի, որոնց մեծ մասը ոստայնանկներ էին։ Նրանց եռանդուն ջանքերի շնորհիւ 1845 թ. մարտին գլուխ եկաւ առաջին ընդհանուր ժողովը, ուր վճռվեց թէյի և ծխախոտի առևտուր սկսել՝ ստանալով պաշտօն թոյլտուութեան վկայական։ 1847 և 1848 թւերին Անգլիայում տիրող թանգութեան պատճառով անդամների թիւը շատացաւ։ Ընկերութեան դրամագլուխը դեռ քիչ էր, արդիւնաբերութեան մասին դեռ չէր մտածում, այլ միայն խանութներ էր պահում և միւս կողմից կրթութիւն տալիս իր անդամներին. նրանց մեծ մասը անգրագէտներ էին։ Այդ շրջանում (1850) Բոչէլում հիմնված բաժնետիրական մի ջրաղացի մէջ նոյն տեղի սպառողական ընկերութիւնը իր անդամների միջև բաժանելու համար ձեռք բերեց 200 բաժին՝ մի-մի ֆունտ ստերլինգով։ Դրանով ընկերութիւնը իր ձեռքը գցեց ջրաղացի բաղդը. ընդհանուր ժողովներում ձայների մեծամասնութիւնը պատկանում էր իրան։ Այդպիսով պիոնէրներից մէկը ընտրվեց ջրաղացի վարչութեան նախագահ։ Սկիզբներում ջրաղացի գործը այնքան էլ լաւ չէր, իսկ երբ սկսեց աշողութեան ծայրը, ընկերութիւնը քաջալերված՝ բաց արեց մի այլ արդիւնաբերական հիմնարկութիւն, թղթի թելեր պատրաստելու գործարան։ Քիչ ժամանակից բաց արին սպանդանոց (1863)։ Ընկերութիւնն ունէր նաև, անդամներին հիւանդութեան կամ մահվան դէպքում նպաստելու համար, օգնութեան դանձարան։

Իւրաքանչիւր անդամ պարտաւոր էր տարվայ մէջ առնուազն 4 ֆունտ ստերլինգի գնումն կատարել։

Տարվայ մէջ գոյացած ընդհանուր շահից դուրս են գալիս մի շարք տոկոսներ, որից յետոյ մնացածը բաժանում 100 մասի. որանից էլ 2½ %-ը լուսաւորութեան և դաստիարակութեան համար դուրս գալուց յետոյ, մնացած 97½ %-ը բաժանում էին թէ անդամների և թէ ոչ անդամների միջև՝ համաձայն կանոնադրութեան։

1904-ին բոչէլեան սպառողական ընկերութիւնների թիւը հասնում էր 330-ի, որից 311-ը առևտրական նպատակով, իսկ 119-ը արդիւնաբերութեան նպատակով էր։ 1902-ին միայն ընկերութիւնը բացեց իր սեփական փուռը, իսկ մինչ այդ՝ անդամները ալիւրը ընկերութիւնից գնում, տանը թխել էին տալիս։ Նոյն թւին երևացին նաև կարի արհեստանոցն ու ծխախոտի գործարանը։ Ընկերութեան դաստիարակչական-կրթական բաժանմունքը միայն ունէր 250,000 ռուբլուց աւելի կապիտալ։ Նա հրատարակում էր նաև իր սեփական հանդէսը, որ լոյս էր տեսնում ամեն ամիս։ Գրադարանը՝ 20 բաժանմունքներով՝ ունէր 20,000 գիրք ամեն հարցի վերաբերեալ։

Շնորհիւ նպատակայարմար կազմակերպութեան՝ բոչէլեան սպառողական ընկերութիւնը քանի գնում՝ ընդլայնվում ու հաստատվում էր։ 1912 թւին շրջանառութեան մէջ էր 405.040 ֆ. ստերլինգ, իսկ արդիւնք 75,669 ֆ. ստերլինգ։ Այժմ նրա անդամների թիւը հասնում է 20,000-ի, իսկ բաժնէկապիտալը 370,374 ֆ. ստեր.։

Բոչէլեան սպառողական ընկերութեան այդ սկզբունքները ժամանակի ընթացքում տարածվեցին Մեծ Բրիտանիայի զանազան կողմերը, գլխաւորապէս Անգլիայում և Շոտլանդիայում։

1845 թւից մինչև 1852-ը Անգլիայում հիմնված էր 27 ընկերութիւն, որոնք մինչև օրս էլ պահում են իրանց գոյութիւնը։ Դրանց մէջ ամենաարդիւնաւէտն ու աչքի ընկնողը Լիտսի սպառողական ընկերութիւնն է. այդ այդպէս է ոչ միայն Անգլիայում, այլ նոյնիսկ ամբողջ աշխարհում։ 1904-ին նա ունէր 49,340 անդամ, որոնք 1.525,000 ֆ. ստեր. գնում են արել. նրանցից իւրաքանչիւրին տարվայ վերջը հասաւ 16% շահաբաժին։ Նման ընկերութիւններից են նաև Բօյլդոնինը, Դերբիին, Խալիֆակսինը և այլն։ Այդ բոլորը կօոպերատիվ ընկերութիւններն էլ ժողովրդի համար ոչ միայն նիւթական, այլ նաև կրթական բարձր միջավայր ստեղծեցին։ Ի հարկէ նրանք մի անգամից չէ որ կարողացան հասնել կազմակերպական այդ բարձրութեան, այլ աստիճանաբար, չը յուսահատվելով սկզբնական անաջողութիւններից։

Կօոպերատիվ ընկերութիւնների տարածվելու գործում խիստ մեծ դեր խաղացին այսպէս կոչված քրիստոնեայ սոցիալիստները, որոնք երևացին 1848 թւին Անգլիայում։

Սրանք իսկապէս սոցիալիզմի մի հերձուածն էին կազմում։

Սոցիալիստների նման՝ սրանք էլ, տեսնելով դոյութիւն ունեցող հասարակակարգերի տնտեսական վիճակի անարդար ձևերն ու երևոյթները, անհրաժեշտ էին համարում փոխել նրանց քրիստոնէական բարոյականութեան սկզբունքների շնորհիւ։ Քրիստոնեայ սոցիալիստները մեծ նշանակութիւն էին տալիս ներքին մարդու կատարելագործութեանը, մի բան, որ առանձին տեղ չէր բռնում սոցիալիստների կանոնների մէջ։

Ինչպէս տեսնում ենք, քրիստոնեայ սոցիալիստները կրօնական, բայց անկեղծ ձգտումներով տոգորված մարդիկ էին, որոնք ֆրանսիական սոցիալիստներից ամիջապէս յետոյ սկսեցին հետաքրքրվել կօոպերացիայով։ Նրանք ժամանակի անուանի մարդկանցից էին. ինչպէս Մորիսը փիլիսոփայութեան պրոֆեսոր էր, Լէյտլոուն փաստաբան էր, Կինգսլէյը քարոզիչ էր և Էդուարդ VII-ի ուսուցիչը, և այլն։ Բոլորն էլ լուրջ գործիչներ էին։ Սրանք իրանց գաղափարներն աշխատում էին տարածել խաղաղութեան և քարոզի միջոցով։ Գրում էին այդ ոգով վէպեր, ամբիոններից քարոզում էին, մտնում էին ժողովները և այլն։ Նրանք համարվում էին Լ. Տոլստոյի նախորդները։

Արդիւնաբերող ընկերութիւնների համար օրէնսդրութիւնը մեծ խոչընդոտներ էր յարուցանում և արգելք հանդիսանում։

Մինչև 1852 թիւը դեռ լիակատար արտօնութիւն չունէին սպառողական ընկերութիւնները և օրէնքի կողմից չէին ճանաչվում որպէս իրաւասու մարմիններ։ Այդ բացասական երևոյթներով լի վիճակից ընկերութիւններն ազատելու և տիրող օրինակարգը յեղափոխելու մէջ մեծ դեր խաղացին քրիստոնեայ սոցիալիստները։ Մերցումը նրանք ճանաչում էին որպէս չարիք։

Շնորհիւ այն հանգամանքի, որ սպառողական և արդիւնաբերական ընկերութիւնները օրինական ազատութիւն ստացան (1852-ին), մինչև 1860 թ. նրանց թիւը կրկնապատկվեց Անգլիայում և Շոտլանդիայում, այն էլ աւելի արդիւնաբերական քաղաքներում։

Քրիստոնեայ սոցիալիստները հանդիպելով մեծ դժուարութիւնների, միւս կողմից լաւ նկատելով կօոպերատիվ միութիւնների տուած մեծ արդիւնքը ժողովրդին, իրանք էլ մտան սպառողական ընկերութիւնների շարքը. դրանով նրանք մեծ զարկ տուին այս վերջինների թէ օրական և թէ թղթական սնմանը։ Նրանց հետևեց մեծաքանակ բազմութիւն, որ մինչ այդ չէր էլ ցանկացել մտնել ընկերութիւնների շարքը։

Անգլիական կօոպերացիայի ամենանպաստաւոր շրջանը 1860, 1861 և 1862 թւականներն էին։ Այդ 3 տարվայ ընթացքում հիմնվեցին 300-ից աւելի սպառողական ընկերութիւններ, որոնցից 176-ը մինչև այժմս էլ կան։ Այս վերջինները հող էին գտնում մեծ մասամբ գաւառներում, գիւղերում, գիւղաքաղաքներում։ Այդքան տարածված ընկերութիւնները իրարից անտեղեակ կամ անիրազեկ չէին. վերջը նրանց միջև ստեղծվեց մի ընդհանուր կապ։ Կազմակերպվեցին երկու ֆեդերատիվ կենտրոններ, մէկը Շոտլանդիայում, միւսը Անգլիայում։ Շնորհիւ այս երկու միութիւնների, անգլիական կօոպերացիան հսկայական նուաճումներ արաւ տնտեսական-արդիւնաբերական աշխարհում։ Նրանց ձեռքին է այժմ Անգլիայի տնտեսական աշխարհի բաղդը։ Կենսական ամեն տեսակի մթերքները, թէ ուտելու և թէ խմելու (օղելից խմիչքների դէմ կռւում են՝ բացառութեամբ 30 ընկերութեան), հագնվելու և զարդարանքի առարկաները, կահաւորութեան պարագաները և այլն և այլն՝ պատրաստվում են իրանց սեփական գործարաններում։ Ունեն սեփական չայի աղնկարան Ցեյլոնում։

Բացի դրանից ունեն սեփական ծխախոտի գործարան, տպարան, նաւեր և այլն։ Հաստատել են բարեգործական նպատակով ընկերութիւններ, որոնք օգնում են անգործներին, հիւանդներին և այլն։

Նրանք ունեն նաև ագարակ, որ արտահանում է մեծ քանակութեամբ անասուններ, մանաւանդ հորթեր։ Ունեն ջրաղացներ, որոնք արտահանում են մեծ չափով ալիւր։ Ունեն սանատորիա իրանց անդամների համար և այլն։

Անգլիական և շոտլանդական միութիւնները մրցակիցներ չեն, այլ գործում են միաբան։ Բացի այդ երկու միութիւնից՝ կան նաև ուրիշները ու կօոպերատիվ միութիւն, որ իր 8 բաժանմունքներով նպատակ ունի տարածել և աւելի ժողովրդականացնել կօոպերացիայի առաւելութիւնն ու նրա բոլոր ֆունկցիաները. դրանց մէջ մեծ տեղ է բռնում դաստիարակչական-կրթական բաժանմունքը իր ընդարձակ պարտականութիւններով։ Կայ կանանց համագործակցական դաս կոչվածը (женская кооперативная гильдія), որ նոյնպէս ունի իր բաժանմունքները առանձին ֆունկցիաների համար։ Սրա գլխաւոր նպատակն է յիշեցնել կանանց այն հանգամանքը, որ կօոպերատիվ շարժման մէջ հիմնական աշողութեան պատճառը կինն է եղել։ Բացի դրանից՝ նրանք նպատակ ունէին ամենաչքաւորներին էլ մտցնել սպառող. ընկերութիւնների շարքը՝ զանազան համագործակցիչ և հաճելի միջոցներով։ Նրանք աշխատում էին ընդարձակել նաև կանանց իրաւունքները։ 1902-ին սպառողական ընկերութեան օժանդակութեամբ կանանց այդ դասը Սէնտէրլէնում բաց արաւ իր բաժանմունքը «Կանանց դաս» անուանով, որի նպատակն էր մանաւորապէս կենսական էժան և լաւ տեսակի մթերքներ հայթայթել այն չքաւորներին, որոնք ոչ մի կերպ հնարաւորութիւն չունեն բաժին վճարելու և սպառողական ընկերութիւններին միանալու։ Այդ նպատակով «Կանանց դասը» բաց արեց իր մեծ խանութը։ Կայ վերջապէս թանգութեան դէմ կռւող տղամարդկանց միութիւն։

Բոչէլեան տիպի սպառողական ընկերութիւնների օրինակով վարվելով Մեծ-Բրիտանիայի, գլխաւորապէս Անգլիայի ընկերութիւնները ստեղծել են հսկայական կապիտալներ, տիրացել են անսպառ հարստութեան։

1914 թւից յետոյ Մեծ-Բրիտանիայում սկսեց պակասել ընկերութիւնների թիւը. այդպէս եղաւ ոչ թէ նրա համար, որ սը-նանկացան կամ փակվեցին, ոչ, այլ նրանցից մի քանիսը միացան և աւելի մեծ ընկերութիւններ կազմեցին։

Իսկ այժմ, երբ պատերազմը ամեն տեղ թանգութիւն է տարածում և կենսական մթերքներն սպառում, Անգլիայում սպառողական ընկերութիւններն ամբողջ զօրքին առատութեամբ հայթայթում են ամբողջ պաշարը։ Բացի դրանից՝ ամեն տեղ բաց են արել իսկապէս էժանագին, անշահախնդիր ճաշարաններ։ Քաղաքային վարչութիւններն էլ իրանց բոլոր պատասէրները տալիս են նրանց։

Համլիկ

ՍՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ,

ճարպակալումը, սրտի սկլէրոզը, սրտի բարախումը եւ թանչոցը, նէվրասթէնիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, զառամութիւնը, հիւծուածութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

„ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ„

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մակլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Целебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոտէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամակադրոշմ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք։

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья
С.-Петроградъ.
Մասնակատար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԳԱՆ ՄԵԾ. Դրան

(№ 1) 0—4

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, 28 յունիսի

«Մշակի» № № 123-ում և 124-ում լոյս տեսան քանդակագործ Ա. Տէր-Մարուքեանի նամակը և Շիրվանզադէի յօդուածը Խաչատուր Աբովեանի արձանի վերաբերեալ։

Որպէսզի հայ հասարակութիւնը հնարաւորութիւն ունենայ ծանօթանալ կառուցվելիք արձանի պատմութեան հետ և միաժամանակ պարզել, թէ որքան մօտ են իրա կանութեանն և ճշմարտութեանն այդ յօդուածները, անհրաժեշտ ենք համարում տալ հետևեալ բացատրութիւնը։

1911 թ. սեպտեմբերի 20-ին նուռարական պայմանագրով քանդակագործ Ա. Տէր-Մարուքեանը պարտաւորվել է Կուլտուրական Միութեան առաջ իր միջոցներով Երևանում կանգնել Խաչ. Աբովեանի արձանը, համաձայն հաստատված նախագծի, ոչ աւելի քան 1912 թ. հոկտեմբեր ամիսը, որի դիմաց ստանալու էր Կուլտուրական Միութիւնից 17 հազար ռուբլի։

Այդ գումարը Տէր-Մարուքեանը պիտի ստանար հետևեալ կարգով. մինչև 1912 թ. դեկտեմբերի վերջը զանազան ժամանակամիջոցներում, այսինքն արձանը կառուցած օրից երեք ամիս յետոյ՝ 12,000 ռ., օրից 5000-ը պիտի ստանար ինքը Տէր-Մարուքեանը, իսկ 7000-ը վճարվելու էր արձանի վերաբերեալ անհրաժեշտ նիւթերի, ճանապարհածախքի, մաքսի և այլն։ Ինչ վերաբերում է մնացած 5000-ին (օրով լրանալու է ընդհանուր գումարը՝ 17,000 ռ.), այդ գումարը Տէր-Մարուքեանը պիտի ստանայ՝ երբ արձանը կառուցվելուց ու պատրաստվելուց յետոյ, պարբերաբար այդ նպատակով դրամներ գանձվելու լինեն։

Համաձայն պայմանագրի, Կուլտուրական Միութիւնը զանազան ժամանակներում տուել է Տէր-Մարուքեանին 8157 ռ. 79 կ., իսկ Տէր-Մարուքեանը, ստանալով այդ գումարը, խոստումներով է կերակրել Կ. Միութեանը, ուրիշ ոչ մի իրական երաշխաւորութիւն չէ տուել, թէ երբևիցէ արձանը կը կառուցվի ընդունված և հաստատված նախագծի համաձայն։

Անհրաժեշտ է նկատել, որ արձանը պէտք է ունենայ հետևեալ մասերը. 1) հիմք, 2) մարմարեայ կամ գրանիտեայ պատուանդան, 3) Աբովեանի բրոնզից ձուլված ֆիգուրան և 4) դարձեալ բրոնզից ձուլված երկու երեխաների ֆիգուրաներ։

Մի շարք դիմումներից յետոյ պարզվել է, որ Տէր-Մարուքեանը պատրաստել է միայն Աբովեանի ֆիգուրան, որը ձուլարանից ստանալու համար դեռ պէտք է վճարել ձուլարանատիրոջ 3000 ֆրանկ (1200 ռ.)։

Պարզ կերպով տեսնելով, որ Տէր-Մարուքեանը նպատակ է դրել որքան հնարաւոր է շատ դրամ ստանալ Կ. Միութիւնից, Միութիւնը ստիպված եղաւ արձանի կառուցման գործը իր ձեռքն առնել և Աբովեանի ձուլված ֆիգուրան ստանալու նպատակով դիմեց Պարիզ՝ Կոստենօբլին, որի գործարանում ձուլվել է Աբովեանի արձանը, խոստանալով վճարել ձուլածքի արժէքը՝ 3000 ֆրանկ։ Տէր-Մարուքեանը դէմ էր այդ բանին. նա ուզում էր, որ դրամը անպատճառ իր միջոցով յանձնվի ձուլարանատիրոջ։ Երկար բանակցութիւններից յետոյ միայն, որը վարում էր Կ. Միութեան կողմից՝ Պարիզում բնակվող Մ. Կրասիլնիկեանը, վերջի վերջոյ կարելի եղաւ որոշ համաձայնութեան գալ ձուլարանատիրոջ հետ, որից յետոյ միայն փոխադրվեց Կրասիլնիկեանին 3000 ֆրանկ, այն պայմանով, որ դրամը վճարվի ձուլարանատիրոջ, երբ արձանը արդէն ճանապարհված կը լինի դէպի Երևան։ Անակնկալ պատեհ բարի պատճառով հնարաւոր չէր արձանը ստանալ, ուստի և Միութիւնը օրոշեց առայժմ այդ գումարը չը վճարել, երկիւղ կրելով որ այդ էլ մինչև այժմ Տէր-Մարուքեանին տրված դրամների վիճակին կենթարկվի։

Բացի այդ, ցանկանալով շատպեցնել արձանի կառուցումը, Կ. Միութիւնը ձեռնարկել ու կառուցել է Երևանում արձանի հիմքը, որի վրա ծախսել է 1007 ռ.։ Այդպիսով ուրեմն մինչև այժմ արձանի համար Միութիւնը հետևեալ ծախսերն է ունեցել. Տէր-Մարուքեանին 8157 ռ. 79 կ., հիմքը գցելուն 1007 ռ. և զանազան ծախքեր (արձանի թոյլտուութիւնը ստանալուն, նստարան և այլն) 783 ռ. 31 կ., փոխադրված է Պարիզ՝ Կրասիլնիկեանին 1200 ռ. (3000 ֆ.), ընդհանուր գումարը 11,148 ռ. 10 կ., իսկ արձանի օգտին մինչև այժմ ժողովված է ընդամենը 10,088 ռ. 70 կ.։ Պարզ է ուրեմն, որ միանգամայն անհնարին են այն ասեկոսները, թէ իբր արձանի օգտին ժողովված գումարները անգործադրելի են մնացել և արձանի բացումը առաջ չի գնում այդ պատճառով և այլն։

Գալով պ. Տէր-Մարուքեանին, նա ստանալով Կ. Միութիւնից ահագին գումար՝ պէտք է ասել, որ չի կատարել այն աշխատանքը, որը անհրաժեշտ է արձանի կառուցման համար։ Այն 12,000 ռուբլուց, որ Կ. Միութիւնը պէտք է տար նրան մի մասը մինչև արձանի կառուցումը, իսկ միւս մասը արձանը իր տեղում կանգնեցնելուց յետոյ, նա ստացել է 8000 ռ. աւելի մի գումար և չի կատարել ամենաանհրաժեշտը—չի պատրաստել երկու երեխաների բրոնզեայ ֆիգուրաները, չի վճարել ձուլարանատիրոջ Աբովեանի արձանի ձուլուածքի փողը, չի պատրաստել հիմքը, գրանիտեայ կամ մարմարեայ պատուանդանը և այդ պատրաստվելիք մասերի ու դրա հետ կապված անհրաժեշտ ծախքերը, ինչպէս օրինակ՝ ճանապարհածախքը, մաքսը և այլն։ Այդ թւած ծախքերը արձանի արժէքի ամենախոշոր մասերն են կազմում։

Կուլտուրական Միութիւնը նոյնիսկ համաձայնվել է վճարել Տէր-Մարուքեանին արձանի ամբողջ արժէքի գումարը, չը սպասելով ինքնակամ նուիրատուութիւնների ժողովարարութեան, սակայն մի պայմանով, որ այդ գումարը չը տրվի իրան, այլ վճարվեն այն ծախքերը, որպիսիք անհրաժեշտ են արձանը ձուլարանից ստանալու, պատուանդանը կառուցելու, հիմքը գցելու, մաքս, ճանապարհածախքը վճարելու և այլն։ Տէր-Մարուքեանը չի համաձայնվել դրան. նա պահանջում է, որ գումարը տրվի իրան։ Ահա թէ որտեղից է առաջ գալիս նրա անբաւականութիւնը։

Կուլտուրական Միութիւնը այլ կերպ վարվել չէր կարող, քանի որ անցեալի դառն փորձից համոզվել է, որ ոչ մի երաշխաւորութիւն չունի, թէ այսուհետև տրվելիք գումարներն էլ նոյն վիճակին չեն ենթարկվի։

Ա. Տէր-Մարուքեանի այդ վարմունքից յետոյ, Կ. Միութեանը մնում է մի բան. առաջին իսկ հնարաւորութեան դէպքում՝ պատերազմից յետոյ, երբ ճանապարհները կը բացվեն, վճարել Պարիզում ձուլարանատիրոջն արձանի արժէքը, արձանը փոխադրել Երևան և, համաձայն հաստատված նախագծի, միւս մասերն էլ իր միջոցներով պատրաստելուց յետոյ վերջացնել կառուցումը։

Իսկ ինչ վերաբերում է քանդակագործ Ա. Տէր-Մարուքեանի վարմունքին, որ ընտացել է կօպէկներով գանձված արձանի գումարները և չի կատարել Կուլտուրական Միութեան և հայ հասարակութեան առաջին առած պարտականութիւնները, թողնում ենք, որ դատաւոր հանդիսանայ ինքը հասարակութիւնը։

Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան գլխաւոր խորհրդի
Նախագահ՝ բժշկապ. Թ. Զաքարեան
Քարտուղար՝ Բ. Մարտիրոսեան

Ժամանակաւոր խմբագիր՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
Հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեան

Հիմնված 1880 թ.

(Գուկիա, Զօրոնցովի արձանի հանդէպ)

Սմեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆՈՒՇՄԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն, վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Դ. ԱԶԱՍԵՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ղեկային և խայտ հիւանդութ. և ծախահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի հիւանդութ.։
Ա. Պ. ԿՈՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեսը. հինգ. և բաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻԶԿ ՏԷՐ-ԳԵՈՐԳԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵՆՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Հրաւերները Հրի։ Համախորհրդի (սիֆիլիսի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—11

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զարթօնքի հայոց եկ.-ծխ. միութեան (Երևան բաժ.) դպրոցի հանրակալաց հարկաւոր է փորձված

ՈՒՍՈՒՑԻՉ,

որը աւանդելու է ըստ ծրագրի բոլոր առարկաները բացի ռուսերէնից, և պատրաստելու է եկեղեց. երգեցիկ խումբ։ Տրվելու է 700 ռ. ռոճիկ և դպրոցին կից մի սենեակ առանց վառելիքի։ Ուղարկել վկայականներ, պատճէնները, յիշելով՝ օրական են պարապմունքները։
Դիմել հոգաբ. նախագահ՝
Գրիգոր ք. Տէր-Գրիգորեանցի
452. 3—

„Մշակի“ խմբագրատան վաճառվում են

հետեւեալ վիպական երկերը.

1) ԶՀՈՒԴ ՔՈՒՇԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ռ.
2) ԻՆՆՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգոյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . . 1 ռ. 50
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամարիոնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . 1 ռ. 50
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդոյի, թարգ. Հ. Առաքելեանի — 60
5) ՏԱՄՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . . — 50
6) ՀԱՅՐԵՆԱՍՈՒՐԿ, Ե. Սպիրիի, թարգ. Իս. Ցարութիւնեանի . — 50
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մոպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ռ.
8) ՍԱԻԱՌՆՈՂ ՈԳԻՆ վէպ. Ե. Սոլովեանի . . . . . — 40

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի բիւրեակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ։ Ճանապարհածախսը մեզ վրա։ Վճարով պահանջողներին կը լինի մի զեղչ 15%։

Հաւցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ
(5) 0—1

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.